# ԱԲՈՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

վերարտադրողական առողջություն, մայրություն և քաղաքականություն

ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

# ԱԲՈՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

## վերարտադրողական առողջություն, մայրություն և քաղաքականություն

Սոնա Բալդրյան

Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ, Երևան, 2021

ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Բառարան ........ 6

Մեթոդաբանություն ........ 8

Պատմական ակնարկ ........ 10

Կ. Պոլսի հայկական համայնքը 1918-1923 թթ. ........ 14

Խորհրդային Հայաստան. 1920-1955 թթ. ........ 20

Հայաստանի Հանրապետություն ........ 31

Գրականության ցանկ ........ 40

Հավելված 1. «Հայ կին» հանդեսից հոդվածներ ........ 42

Հավելված 2. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրից հոդվածներ ........ 46

# ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Պատկեր 1. «Սարկաւագին տարեցոյցը», 1921 թվական (Ekmekcioglu, 2016, էջ 20) .......... 13
Պատկեր 2. Հայկական Կարմիր խաչի Շիշլիի մասնաճյուղի հիվանդանոցը (Ekmekcioglu, 2016) .......... 15
Պատկեր 3. «Հայ կին» հանդես, «Մանկական գեղեցկություն» բաժնի նկարազարդումներից .......... 16
Պատկեր 4. Շիշլիի Հայկական Կարմիր խաչի հիվանդանոցը. տարեթիվը՝ անհայտ Ekmekcioglu, 2013) .......... 17
Պատկեր 5. «Հայ բուժակ», 1922 թվական, հուլիս .......... 18
Պատկեր 6. «Հայաստանի աշխատավորուհի», 1931 թվական .......... 20
Պատկեր 7. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի «Առողջապահություն» բաժնի նկարազարդումներից .......... 21
Պատկեր 8. «Հայաստանի աշխատավորուհի», 1925 թվական, նոյեմբեր .......... 22
Պատկեր 9. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հուլիս .......... 25
Պատկեր 10. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, կոմերիտուհի Մարուսյա Լալայանը Երևանի ձեթ-օճառ կոմբինատից գրում է .......... 26
Պատկեր 11. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հուլիս .......... 27
Պատկեր 12. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հուլիս .......... 28
Պատկեր 13. 2010 թվականի Հայաստանի Ժողովրդագրական և առողջապահական հարցերի հետազոտության (ՀԺԱՀ-2010) տիտղոսաթերթը (իրականացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից) .. 31
Պատկեր 14. «Պրոլայֆ» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջից .......... 38
Պատկեր 15. «Պրոլայֆ» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջից .......... 38
Պատկեր 16. Պատկեր 16. «Հայ կին» 1920 թվական, օգոստոս .......... 42
Պատկեր 17. «Հայ կին», 1920 թվական, օգոստոս .......... 43
Պատկեր 18. «Հայ կին», 1925 թվական, մարտ .......... 44
Պատկեր 19. «Հայ կին», 1925 թվական, մարտ .......... 45

Պատկեր 20. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր ... 46
Պատկեր 21. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր ... 47
Պատկեր 22. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր ... 48
Պատկեր 23. «Հայաստանի աշխատավորուհի», 1930 թվական, հունիս ... 48
Պատկեր 24. «Հայաստանի աշխատավորուհի»,
1932 թվական, հոկտեմբեր-նոյեմբեր ... 49
Պատկեր 25. «Հայաստանի աշխատավորուհի»,
1932 թվական, հոկտեմբեր-նոյեմբեր ... 50
Պատկեր 26. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, ապրիլ ... 51
Պատկեր 27. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, ապրիլ ... 52
Պատկեր 28. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 3 ... 53
Պատկեր 29. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 4 ... 54
Պատկեր 30. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 9 ... 55
Պատկեր 31. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 10 ... 56
Պատկեր 32. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս ... 57
Պատկեր 33. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս ... 57
Պատկեր 34. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս ... 58
Պատկեր 35. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս ... 58

# ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Ձև 1. Աբորտի վերաբերյալ դիրքորոշումները Հայաստանում
2011-2017 թվականներին ... 33

# ԲԱՌԱՐԱՆ

**Հղիության արհեստական ընդհատում կամ աբորտ**

Միջամտություն՝ հղիությունը ընդհատելու համար: Շատ երկրներում այն օրինական է համարվում հղիության առաջին եռամսյակում (մինչև 12 շաբաթականը): Կա աբորտի երկու տեսակ՝ դեղորայքային և վիրահատական:

**Դեղորայքային աբորտ**

Հղիությունն այս եղանակով ընդհատվում է մինչև 8 շաբաթականը: Բժիշկը նշանակում է միֆեպրիստոն և միզոպրոստոլ դեղահաբերը: Հղի անձը դրանք ընդունում է 36-48 ժամվա տարբերությամբ:

**Վիրահատական աբորտ**

Այս ճանապարհով կատարված աբորտի ժամանակ արգանդի պարունակությունը (սաղմը կամ պտուղը, ընկերքը և արգանդի գերաճած լորձաթաղանթը) հեռացվում է բժշկական գործիքների միջոցով:

**Վակուում-ասպիրացիայի մեթոդ**

Աբորտի ամենատարածված մեթոդն է: Կիրառվում է հղիության առաջին եռամսյակում: Այս մեթոդը վիրահատական բոլոր մեթոդներից ամենաանվտանգն է: Արգանդի պարունակությունը հեռացվում է ձղոտանման նուրբ փողրակի միջոցով, որն արգանդ է մտցվում վզիկի միջով: Փողրակն ամրացվում է արտածծման թույլ աղբյուրի, որը արտաքաշում է հյուսվածքը (Բոստոնի կանանց առողջության գրքի կոլեկտիվ, 2010):

**Կյուրետաժ («քերելու» մեթոդ)**

Աբորտի ավելի վտանգավոր տեսակն է, որ հիմնականում տարածված է եղել նախորդ դարում: Այս մեթոդը, անվանը համապատասխան, ենթադրում է արգանդի պատերի մաքրում բժշկական գործիքների միջոցով:

**Ընտանիքի պլանավորում**
Զույգերի կողմից հակաբեղմնավորիչ մեթոդների իրազեկված ընտրություն և ընտանիքի պլանավորում ըստ իրենց կարիքների:

**Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ (ՍՎԱԻ)**
Մարդու սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ հարցերի և դրանցից բխող իրավական կարգավորումների ամբողջություն:

**Սեռական դաստիարակություն**
Մարդկանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ իրենց տարիքին համապատասխան գիտելիքների տրամադրում, որպեսզի սեռականության և սեռական հարաբերությունների մասին առողջ որոշումներ կայացնեն:

**Պրոնատալիստ**
Պետական այն քաղաքականությունն է, որը բնակչությանը խրախուսում է շատ երեխաներ ունենալ: Այս քաղաքականությունը հիմնականում իրականացվում է աբորտների արգելմամբ կամ անհասանելիությամբ կամ էլ սոցիալ-տնտեսական այլ լծակների՝ նպաստների ու միանվագ վճարների միջոցով:

**Պրոլայֆ (անգլ.՝ pro-life)**
Աբորտների ընդդիմախոսների շարժման միջազգային անունը: Արևմուտքում շարժումն ունի կրոնական և ծայրահեղ աջական արմատներ:

**Պրոչոյս (անգլ.՝ pro-choice)**
Կնոջ ընտրությանը աջակցող շարժում, որի նպատակն է պաշտպանել աբորտների օրինականությունը, ապահովությունը և հասանելիությունը:

# ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը գրվել է՝ հիմնվելով ֆեմինիստական և պրոչոյս արժեքների վրա: Հետազոտության նպատակն է տեղայնացնել հայ կանանց վերարտադրողական իրավունքերն ու առողջությունը ավելի մեծ՝ պետական ու քաղաքական շահերի համատեքստում, տեսնել, թե ինչպես են հայ կանայք և նրանց մարմինները քաղաքականացվել և ծառայել հանուն ավելի բարձր շահ համարվող հայրենիքի և պետության տարբեր ժամանակաշրջաններում և սոցիալ-տնտեսական տարբեր քաղաքականություններ վարող իշխանությունների կողմից:

Հետազոտությունը դիտարկում է երեք ժամանակաշրջան՝ 1918-1923 թվականների Կ.Պոլսի հայկական համայնքի, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի երրորդ հանրապետության: Այս ժամանակաշրջաններն ընտրվել են որպես այժմյան իրականության պատմական համատեքստ և օգնում են նկատելու որոշ կրկնվող փաստեր: Ավելին՝ առաջին երկու ժամանակաշրջանները քիչ են հետազոտվել վերարտադրողական առողջության և իրավունքների տեսանկյունից, և այս հետազոտությունը հնարավորություն է տալիս մշակելու և հանրայնացնելու այս ժամանակների առաջնային աղբյուրների հարուստ տվյալները: Հարկ է նշել, որ հետազոտությանը հետաքրքրող բոլոր

երեք ժամանակներն էլ առանձին կարող են դառնալ շատ ավելի խորքային հետազո-տու- թյունների հիմք: Հետազոտության նպատակն են պատմական համատեքստի ու-սումնասիրությունը և աբորտի շուրջ ծավալված խոսույթի վերլուծությունը հայ իրակա-նության մեջ 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերը: Հատկանշական է, որ ընտրված երեք ժամանակաշրջաններն էլ պատմական ծանր իրողությունների են հետևում: 1919-1923 թվականների Կ.Պոլիսում ցեղասպանության միջով անցած հայկական համայնքը, հաղ-թահարելով հոգեբանական ցնցումները, փորձում էր կազմակերպել համայնքի կյանքը տնտեսական չքավորության պայմաններում: Նույն խնդիրը կար Հայաստանի երկրորդ և երրորդ հանրապետություններում: Երկրորդի դեպքում կրկին ցեղասպանությունը վե-րապրածների ապահովության հարցն էր, իսկ երրորդի դեպքում՝ ԽՍՀՄ-ի փլուզման և Արցախյան առաջին պատերազմից հետո երկրի տնտեսական վատթար վիճակը:

Հետազոտության համար օգտագործվել են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդա-յին աղբյուրներ: Առաջնային աղբյուրներն են ժամանակի թերթերն ու ամսագրերը, իսկ երկրորդային աղբյուրները ներառում են ինչպես տեղի, այնպես էլ միջազգային փորձա-գետների կատարած հետազոտություններ: Առաջնային աղբյուրներից են «Հայ կին» կի-սամյա հանդեսը, որը տպագրվել է Կ.Պոլսում 1919-1933 թվականներին: Ուսումնասիրվել են այս հանդեսի 1919-ից մինչև 1921 թվականների 50 հրատարակություններ: «Հայ կին» պարբերականի թվայնացված օրինակները հասանելի են Հայաստանի ազգային գրա-դարանի կայքէջում: Խորհրդային Հայաստանի տարիների համար օգտագործվել է «Հա-յաստանի աշխատավորուհի» ամսագրի 60 հրատարակություն: Հայաստանում ներկա իրավիճակը հասկանալու համար օգտագործվել են երկրորդային տվյալներ ու հետազո-տություններ, ինչպես նաև խորքային հարցազրույց ոլորտի փորձագետի հետ:

Շնորհակալություն եմ հայտնում Կանանց ռեսուրսային կենտրոնի աշխատակիցնե-րին՝ տնօրեն Անուշ Պողոսյանին և շահերի պաշտպանության մասնագետ Աննա Հով-հաննիսյանին՝ հետազոտության իրականացմանն աջակցելու և իրենց մասնագիտա-կան խորհրդատվությամբ այն համապարփակ դարձնելու համար:

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

*«[...] Նա կամաց վեր կացավ և ցրտից սարսռալով մոտեցավ մորը: Մոր ծնկների արանքին մի պստիկ, շատ պստիկ մանուկ տեսավ, մերկ, կարմիր: Մայրը ամբողջ մարմնով խոնարհված նրա վրա, ատամները պինդ սեղմել էր իրար և ձեռքերով հուպ էր տալիս մանկան կոկորդը, շարունակ կրկնելով սեղմած ատամների միջից. «Ի՞նչ եմ անում... ի՞նչ եմ անում... քիչ ունե՞մ... քե՞զ ոնց պահեմ... քե՞զ ոնց պահեմ...»: Մանուկը գլուխը ետ էր գցել, աչքերը փակ և տարօրինակ կերպով շարժում էր պստիկ կարմիր ոտներն ու ձեռքերը: Ձայնը այլևս չէր լսվում:*

*Սոնեն հանկարծ ճչաց, ինքն էլ չէր իմանում - ուրախությունի՞ց, որ մայրը երեխա էր բերել, թե՞ սարսափած այն բանից, ինչ որ անում էր մայրը իր նորածին մանկանը...»:*

**Նար-Դոս, «Ադամամութին», 1898 թ.**

Այսպես է ավարտվում Նար-Դոսի «Ադամամութին» կարճ պատմվածքը. գլխավոր հերոսը իր երեխաների աչքի առաջ խեղդամահ է անում նորածնին, քանի որ բավարար ֆինանսական միջոցներ չունի ևս մեկ երեխա մեծացնելու համար: Նար-Դոսի մեկ այլ պատմվածքի՝ «Սպանված աղավնու» գլխավոր հերոս Սառայի անցանկալի հղիությունը նույնպես ավարտվել էր երեխայասպանությամբ, երբ ծննդաբերելուց հետո նրա ամուսինը՝ Գարեգինը, երեխային խեղդամահ էր արել: Անցանկալի հղիության հետևանքով երեխայասպանությունները, ցավոք, քիչ հանդիպող երևույթ չեն եղել նախորդ դարերում:

Սակայն միշտ չէ, որ անցանկալի հղիության հարցն ավարտվել է երեխայասպանությամբ. դարերի ընթացքում աբորտի, ինչպես նաև հակաբեղմնավորիչ մեթոդները փոփոխվել ու կատարելագործվել են: Աբորտի տարատեսակ մեթոդների մասին կարող ենք իմանալ տարբեր սկզբնաղբյուրներից: Աստվածաշնչում անգամ կա մի պատմություն, երբ հոգևորականը անհավատարիմ կնոջը «դառը ջուր» է տալիս, որ վիժում առաջացնի[1]: Շատ կրոններ աբորտի վերաբերյալ տարբեր պատկերացումներ ունեին, ու թեև դրանք միջամտությանը բացասական են վերաբերվում, Արևմուտքում հակաաբորտային շարժումները սկսեցին ակտիվանալ միայն 19-դարում: Օրինակ՝ ԱՄՆ-ում մինչև 1800-ականների վերջը կին հեքիմներն անարգել աբորտ էին իրականացնում: 1803 թվականին Մեծ

1. Աստվածաշունչ, Թվոց 5, «Օրենք անառակության մեջ կասկածվող կանանց մասին» (Մատեան Հին եւ Նոր կտակարանների, 1994, էջ 163-164):

Բրիտանիան դարձավ առաջին պետությունը, որը հակաաբորտային օրենքներ ընդունեց (Բոստոնի կանանց առողջության գրքի կոլեկտիվ, 2010): ԱՄՆ-ը հետևեց այս քայլին, և շուտով տարբեր նահանգներ աբորտն արգելելու մասին օրենքներ ընդունեցին: «Մենք ու մեր մարմինը» գրքում բացատրվում է 19-րդ դարի հակաաբորտային շարժումների տրամաբանությունը: Հատված գրքից.

> «Աբորտը «ոճիր» և «հանցանք» համարվեց մի քանի պատճառներով: 19-րդ դարի կեսերին մարդասիրական բարեփոխումների ուղղվածությունը ընդլայնեց պահպանողականների շարժումը աբորտների դեմ, որն այն ժամանակ վտանգավոր միջոցառում էր: Իրականացվում էր կոպիտ մեթոդներով, շատ քիչ հականեխիչներով, և մահացության ցուցանիշը բարձր էր: Սակայն միայն սրանով չեն բացատրվում աբորտի դեմ ուղղված հարձակումները: Ասենք, որ վտանգի բարձր հավանականություն կրող վիրահատական այլ միջամտությունները, որոնք կարևոր էին համարվում մարդկանց առողջության և բարեկեցության համար, չէին արգելվում: Մինչդեռ աբորտի վտանգներից կանանց «պաշտպանելը» իրականում նպատակաուղղված էր նրանց վերահսկելուն և ավանդական «մայրական» դերի շրջանակներում պահելուն: Հակաաբորտային օրենսդրությունը հակաֆեմինիստական դիրքորոշման մասն էր, որն ուղղված էր 19-րդ դարի կանանց ընտրական ձայնի, ինքնահոժար մայրության և այլ իրավունքների համար ծավալվող շարժման դեմ» (Բոստոնի կանանց առողջության գրքի կոլեկտիվ, 2010, էջեր 375–376):

ԱՄՆ-ում հակաաբորտային շարժումների սկսվելը նաև պայմանավորված է երկրում պետական մակարդակով իրականացվող ռասիստական քաղաքականությամբ: Այս թվականներին երկրում գնալով ավելանում էր ոչ սպիտակամորթ բնակչությունը, և սա հուզում էր սպիտակամորթների գերակայությամբ մտահոգված քաղաքական առաջնորդներին (Pollitt, 1997): Այս հարցով հատկապես հետաքրքրված էին բողոքական, քրիստոնյա-ֆունդամենտալիստական հայացքներ ունեցող կառույցները: Մեկ այլ հանգամանք էին կին հեքիմներին, որոնք հաճախ սևամորթ և բնիկ ամերիկացիներ էին, բժշկությունից դուրս մղելու և սպիտակամորթ տղամարդ բժիշկներին այս ոլորտում միակ հեղինակությունը թողնելու ջանքերը: ԱՄՆ-ում կանայք մահանում էին անապահով պայմաններում կազմակերպվող աբորտներից, և միայն 1973 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանը «Ռոյն ընդդեմ Ուեյդի» դեպքով նախադեպ սահմանեց աբորտների օրինականացման համար: Սակայն կրոնական, հատկապես քրիստոնյա ֆունդամենտալիստական կառույցները մինչ օրս էլ շարունակում են աբորտի դեմ կատաղի պայքար մղել: Այս հետազոտությունը գրելու պահին էլ ԱՄՆ Գերագույն դատարանը կանգնած է աբորտը կրկին քրեականացնելու որոշման առջև:

Սա կապիտալիստական երկրների դիրքորոշումն էր աբորտի վերաբերյալ: Արևելքում 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հիմնված սոցիալիստական պետության առաջնորդներն այլ կարծիքի էին: Վլադիմիր Լենինը հավատում էր, որ կապիտալիստական երկրներում աբորտն արգելող օրենքները «տիրապետող դասակարգի կեղծավորությունն» են, քանի որ դրանք «չեն բուժում կապիտալիզմի հիվանդությունները, այլ առանձնապես ծանր են դարձնում այդ հիվանդությունները կեղեքվող մասսաների համար» (Հավելված 2, Պատկեր 26):

Այսպիսով՝ 1920 թվականին ԽՍՀՄ-ը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որն օրինականացրեց աբորտը, թեև ժամանակի բժիշկները դա ապահով միջամտություն չէին համարում: Թեև աբորտները օրինական էին, խորհրդային շրջանի կանայք շարունակում էին ընդհատակյա աբորտների դիմել, և հակաբեղմնավորիչ միջոցների զանգվածային հասանելիություն չկար: ԽՍՀՄ-ում աբորտի քաղաքականության մասին ավելի մանրամասն տե՛ս «Խորհրդային Հայաստան» բաժնում:

Անապահով աբորտները դեռևս կարևոր առողջապահական հիմնախնդիր են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով այսօր ամբողջ աշխարհում տարեկան 42 միլիոն աբորտ է իրականացվում, որից 20 միլիոնը՝ անապահով պայմաններում: Սրա հետևանքով տարեկան ավելի քան 60 000 կին մահանում է, իսկ 5 միլիոնը՝ երկարաժամկետ առողջական խնդիրներ է ձեռք բերում (Haddad & Nour, 2009): Ավելին՝ զարգացող երկրներում ամեն 8 րոպեում 1 հոգի է մահանում անապահով պայմաններում կազմակերպվող աբորտների հետևանքով (Haddad & Nour, 2009):

# Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 1918-1923 ԹԹ.




Պատկեր 1.
«Սարկաւագին տարեցոյցը», 1921 թվական (Ekmekcioglu, 2016, էջ 20)

1918 թվականի Մուդրոսի զինադադարի կնքումից հետո Կ.Պոլիսը (այժմ՝ Ստամբուլ) գրավված էր Անտանտի ուժերի կողմից: Այս իրավիճակում տեղի հայկական համայնքն ավելի համարձակ գործունեություն էր ծավալում, հատկապես հայ կանայք, որոնք ներգրավված էին քաղաքական կյանքի մեջ՝ դա կլիներ պատրիարքարանի որբահավաք առաքելություններին մասնակցելը, հիվանդանոցներում և որբանոցներում կամավորություն անելը, գրադարաններ ու կանանց ակումբներ վարելը կամ արտասահմանցի գործընկերներին Հայկական հարցի մասին իրազեկելն ու քարոզարշավ իրականացնելը: Այս կանանցից մեկն էր Հայկանուշ Մառքը (1885-1966), ով այն եզակի հայերից էր, որ ցեղասպանությունից հետո մնացել էր Կ.Պոլսում և 1919 թվականին հիմնադրել «Հայ կին» կիսամյա հանդեսը: Այս հանդեսը ուսումնասիրելով՝ մենք կարող ենք տեղեկանալ հայկական համայնքի խնդիրներին, հայ կանանց հոգսերին, և սա հազվագյուտ հնարավորություն է ժամանակի քաղաքական անցուդարձի մասին տեղեկանալու ոչ միայն հայ, այլև հայ կանանց կողմից հրատարակվող թերթից: «Հայ կին» հանդեսի էջերից մենք տեղեկանում ենք, թե ինչ առաջնահերթություններ ուներ հայ համայնքը հետպատերազմյան Թուրքիայում, և դա մեզ թույլ է տալիս մեր եզրահանգումներն անել ժամանակի գործընթացների մասին: Լեռնա Էքմեքչիօղլուն բացառիկ գիտնական է, ով ուսումնասիրել է այս տարիները և վերլուծել գենդերազգայուն տեսանկյունից: Նրա Recovering Armenia (2016) գիրքը և A Climate for Abduction, a Climate for Redemption, The Politics of Inclusion during and after the Armenian Genocide (2013) հոդվածը, ինչպես նաև հենց «Հայ կին» հանդեսի 1919-1921 թվականների համարների վերլուծությունները հետազոտության այս գլխի հիմնական աղբյուրներն են:

Էքմեքչիօղլուն հայ կանանց հարաբերությունները հայկական համայնքի և թուրքական պետության հետ բնութագրում է որպես եռաշերտ.

- Ընտանիք և ընտանիքում կանանց դերը՝ <u>հայկական մասնավոր տարածք:</u>
- Եկեղեցի, դպրոցներ, հիվանդանոցներ, գերեզմանոց և համայնքային այլ կառույցներ՝ <u>հայկական հանրային տարածք:</u>
- Թուրքական պետություն՝ <u>թուրքական հանրային տարածք</u>:

Այս եռաշերտությունը պատճառ էր դառնում, որ հայ կանայք հաճախ ստիպված լինեին զիջումների գնալ հայկական հանրային և մասնավոր տարածքներում՝ առերեսվելով թուրքական պետության բռնաճնշումներին: Այս հարցում բացառություն չէր Հայկանուշ Մառքը, ով եթե նույնիսկ քննադատում էր հայկական համայնքային կառույցներին, այդ թվում՝ նաև եկեղեցուն, դա անում էր զգուշավոր և առանց չափից դուրս հանդուգն երևալու: Սակայն սա չէր կանգնեցնում պահպանողական թերթերին և համայնքային հեղինակություններին, որ «Հայ կին» հանդեսին չմեղադրեին հակահայկական քաղաքականություն վարելու համար:

Հայոց ցեղասպանությունը գենդերացված գործընթաց էր, քանի որ թուրքական պետության աչքերում միայն հայ տղամարդն էր հայկականության կրողը: Այն ոչ միայն գենդերացված էր, այլև տարիքային բաժանում ուներ. երեխաներին խնայում էին՝ նրանց առևանգելով և թուրքական ընտանիքներում ինտեգրելով: Այս պատճառով ցեղասպանությունից հետո մեծ թվով կանայք և երեխաներ ողջ էին մնացել, և հայկական համայնքը խնդիր էր դրել նրանց «ազատագրելու» և վերադարձնելու:

Հայկանուշ Մառքի գործընկերուհիներից էր Զարուհի Բահրին՝ Հայկական Կարմիր խաչի հիմնադիրներից, ով ակտիվորեն մասնակցում էր պատրիարքարանի որբահավաք առաքելություններին: Այս առաքելությունների նպատակն էր փնտրել հայ երեխաների ու կանանց, որոնք Հայոց ցեղասպանության ժամանակ առևանգվել էին թուրքերի կողմից: Բահրին պատրիարք Զավենի կողմից նշանակվել էր Շիշլիի հիվանդանոցի համակարգող (Պատկեր 2): Այս հիվանդանոցն ուներ ծննդարան այն կանանց համար, որոնց երեխաների հայրերը թուրքեր էին: Այս հիվանդանոցում էին պահվում այն երեխաները, որոնց էթնիկական պատկանելությունն անհայտ էր[2], մինչև որ նրանց էթնիկ ծագումը կորոշվեր: Այս տեսակի խնդիրներով պայմանավորված՝ այս ընթացքում պատրիարքարանը ժառանգականության օրենքում կարևոր փոփոխություն արեց. յուրաքանչյուր հայ կնոջից ծնված երեխա համարվում էր հայ: Մինչ այդ երեխայի հայ լինելը որոշվում էր միայն հոր հայ լինելով: Այս աննախադեպ փոփոխությունն արվեց այն պատճառով, որ ցեղասպանության ընթացքում հազարավոր հայ կանայք ենթարկվել էին սեռական բռնության, ինչի հետևանքով հղիացել և երեխաներ էին ունեցել: Ազգերի ինքնորոշման վիլսոնյան քաղաքականության համաձայն, ըստ բնակչության թվի, ազգերը տարածքներ կարող էին ստանալ պետություն ձևավորելու համար: Այսպիսով՝ հայկական համայնքը խնդիր ուներ կորուստները վերականգնելու և հայ բնակչության թիվը մե-




**Պատկեր 2.**
**Հայկական Կարմիր խաչի Շիշլիի մասնաճյուղի հիվանդանոցը (Ekmekcioglu, 2016)**

2. Երեխաներ, որոնց հայրերը ամենայն հավանականությամբ թուրք էին, իսկ մայրերը՝ հայ:

ծացնելու, որպեսզի Անտանտի պետությունների կողմից բավականաչափ տարածքներ ստանար՝ նոր պետություն հիմնելու նպատակով: Այս հույսերը պիտի կոտրվեին 1922-1923 թվականների Լոզանի կոնֆերանսի ժամանակ, որից հետո տեղի հայկական համայնքը պիտի փախչեր Թուրքիայից՝ վախենալով թուրքական նոր իշխանությունների վրեժխնդրությունից:

Բնականաբար այս պրոնատալիստական դիրքորոշումը պիտի ազդեր հայ կանանց վերարտադրողական կարիքների իրացման վրա: Որբահավաք առաքելությունների միջոցով հայկական համայնքը  ազգը վերականգնելու հնարավորություն էր տեսնում: Հաշվի առնելով, որ տեղի համայնքը բավականին պահպանողական էր և կանանց «մաքրության» մասին կրոնական պատկերացումներ ուներ, երեխաներին նաև մոր կողմից հայ համարելը բավականին առաջադեմ քայլ կարելի էր համարել: Սակայն ինչպես արդեն նշվեց, սա արվում էր հայ բնակչության կորուստները վերականգնելու նպատակով:

Երեխաների միջոցով վերապրելը դարձել էր հայկական համայնքի գլխավոր նպատակը: Օրինակ՝ «Հայ կին»-ը «Մանկական գեղեցկություն» վերնագրով առանձին բաժին ուներ, և տեղի և արտասահմանի հայերն իրենց երեխաների նկարներն էին ուղարկում հանդեսում տպագրելու համար (Պատկեր 3): 1920 թվականի սեպտեմբերի համարի հոդվածներից մեկը առաջարկում է հարկել չամուսնացածներին, քանի որ համայնքը բնակչության թիվը ավելացնելու խնդիր ուներ: Հատկանշական է, որ հոդվածի հեղինակը Փարիզից է:




Էքմեքչիօղլուի հետազոտությունը (2013)՝ ցեղասպանության ժամանակ առևանգված հայ կանանց մասին, փաստում է, որ սեռական բռնության և տարատեսակ այլ բռնությունների զոհ դարձած հայ կանանց մի մասը երբեմն չէր ուզում հղիությունը շարունակել, և խնդրում էին բժիշկներին, որ վիժում առաջացնեն: Բայց բժիշկները հաճախ մերժում էին նրանց՝ մեղադրելով  երեխայասպանության համար:

**Պատկեր 3.**
**«Հայ կին» հանդես, «Մանկական գեղեցկություն» բաժնի նկարազարդումներից**




**Պատկեր 4. Շիշլիի Հայկական Կարմիր խաչի հիվանդանոցը. տարեթիվը՝ անհայտ (Ekmekcioglu, 2013)**

Հայկական Կարմիր խաչի հիմնադիրներից Զարուհի Քալեմքեարեանը պատմում է մի պատանի աղջկա մասին, որը հղիացել էր սեռական բռնության հետևանքով: Աղջիկը պատմել էր, որ իրեն բռնաբարող թուրքը իր փեսացուին ստիպել էր ականատես լինել դեպքին և այնուհետև սպանել էր նրան: Աղջկա հղիությունը առաջին եռամսյակում էր: Քալեմքեարեանը պատմում էր, որ աղջիկը նրան աղաչել էր վիժում առաջացնել, բայց նա, չնայած աղջկա նկատմամբ կարեկցանքին, մերժել էր նրան: Աղջիկը Քալեմքեարեանի տուն էր գալիս ամեն օր՝ խնդրելով վերջ տալ հղիությանը, մինչև անգամ գլուխը փայտե հատակին տալով փորձել էր վնասել իրեն, քանի որ «հոգին լցված էր վրեժ առնելու ցանկությամբ» (Ekmekcioglu, 2013): Վախենալով, որ աղջիկը երեխայասպանություն կանի՝ խնամակալ տիկինները նրան փակում են Շիշլիի հիվանդանոցի ծնարանում, մինչև երեխան կծնվի: Այս ծնարանում էին հայտնվում «անտերունչ երիտասարդ մայրերը», որոնց երեխաների հայրերը, ինչպես արդեն նշվեց, թուրքեր էին (Ekmekcioglu, 2013): Այս ծնարանում ծննդաբերությունից ժամեր անց աղջիկը ինքնասպան է լինում: Ծնարանի մյուս մայրերը, սա տեսնելով, հրաժարվում են նորածնին կերակրելուց: Թե ինչ է լինում երեխայի հետ հետագայում, Քալեմքեարեանը չի պատմում: «Մեր որբերը», այսպես էին դիմում խնամատար կանայք սեռական բռնության հետևանքով ծնված երեխաներին:

«Հայ բուժակ» ամսաթերթի 1922 թվականի հուլիսյան համարում «Ո՞ւր կերթաս, հա՛յ կին» վերնագրով մի հոդված կա (Պատկեր 5): Հոդվածագիրը հարցնում է. «Ինչո՞ւ այդ այլասերումը, ի՞նչ բան քեզ կը թելադրէ ըլլալ ոճրագործ, ըլլալ որդեսպան,- այնուհետև շարունակում:- Քու նախնիքներդ իրենց փառք ու պատիվ կը սեպէին երբ ծնունդ տուած էին բազմաթիւ էակներու, որոնք հաւանաբար քու ծնողքդ կամ պապդ ու հանիդ են»: «[...] դուն պէտք է խիզախես և հեռու վանես քեզմէ ամէն այլասեռ մտածում և սկզբունք, ու նուիրուիս միմիայն արարչագործութեան, ինչ որ միակ պարտաւորութիւնդ է»: Թերթը ակնհայտ ձևով խոսում է աբորտի մասին և կանանց մեղադրում է աբորտ անելու ոճրագործության համար, իսկ վերջում հիշեցնում է, որ նրանց միակ պարտավորությունը

երեխա ունենալն է: Հայ կանանց ասոցիացիայի ներկայացուցիչներին, որոնք հաճախ պատասխանատու էին որբանոցների և հիվանդանոցների պահպանության համար, եկեղեցին նախազգուշացրել էր, որ բռնաբարված կանանցից ու աղջիկներից շատերը չեն ցանկանում ծննդաբերել և կարող են դիմել վիժելու մի շարք մեթոդների (Ekmekcioglu, 2016): «Հայ կին» հանդեսի 1920 թվականի ապրիլի համարում Գոհար Կազմելեանը «Բռնի մայրութեան պարտադրուած դեռատի մայրերու հոգեկան վիճակը եւ անոնց երեխանե-րուն զրկանքները» վերնագրով հոդվածում գրում է.

> «Հազիւ թէ աշխարհիս ինչ ըլլալը ըմբռնելու չափ հասունցած ինկած են ճիւաղնե-րու ձեռք և անոնց կիրքերուն խաղալիքը ըլլալէ յետոյ, այժմ մայր եղած կը քաշկռ-տեն իրենց գոյութիւնը անիծելով աշխարհին ալ, ծնած զաւակն ալ»:


# Ո՞ՒՐ ԿԵՐԹԱՍ ՀԱՅ ԿԻՆ

Ո՞ւր կ'երթաս հայ կին, տեսակ մը իրարանցումով, ճակատդ խոժոռած, աչքերդ մոլորած. ո՞ւր. ներսդ նոր զգացումի մը հանդիման, ինչո՞ւ կընդվզիս բնութեան անյեղլի օրէնքին առջեւ, և դեղ ու դարման կը փնտռես այդ նոր զգացումդ մեռցնելու։ Ինչո՞ւ այդ այլասերումը, ինչ բան քեզ կը թելադրէ ըլլալ ոճրագործ, ըլլալ որդեսպան: Քու նախնիքներդ իրենց փառք ու պատիւ կը սեպէին երբ ծնունդ տուած էին բազմաթիւ էակներու որոնք հաւանաբար քու ծնողքդ կամ պապդ ու հանիդ են։ Հայ կինը աւանդապաշտ էր եւ է .. կ'ըսեն մինչեւ այսօր։ Բայց կ'երեւայ թէ այդ աւանդապաշտութիւնդ պարզ պիտակ մը միայն մնացած է, և չ'ես այսօր ինչ որ էիր հարիւր տարի առաջ։ Փա՞ստ. փաստը մէջտեղն է։ Քա՞նի ընտանիք կրնանք այսօր համրել որոնք տասնեակ մը ծնունդներու բողբոջներովը պճնազարդուած ըլլան։ Պիտի ըսեմ շատ քիչ. հարուստ թէ աղքատ Հայ կինը նոր ուղի մը ընդգծած է իրեն — ըլլալ անձնապաշտ, ըլլալ պարտազանց:

Բայց պէտք չէ թեթեւօրէն մոռնալ, ով Հայ կին, դուն Հայ իրականութեան անկիւնաքարն ես և զոհաբերութեան, ու պարտականութեան կիրարկման քրմուհին, դուն պէտք է խիզախես և հեռու վանես քեզմէ ամէն այլասեր մտածում և սկզբունք, ու նուիրուիս միմիայն արարչագործութեան, ինչ որ միակ պարտաւորութիւնդ է։ Այդ պարտաւորութեանդ լիովին կատարումն է որ պիտի իրագործէ մեր իտէալը, և տոգորուած այս զգացումներով երբ տեսնես Հայ կին մը որ տեսակ մը իրարանցումով, աչքերը մոլորած, ճակատը խոժոռած կ'երթայ, դարձուր զինքը և ըսէ իրեն Ո՞ւր Հայ կին.

ՏՕՔԹ. ՏԷՐՈՐԴԻ

**Պատկեր 5.**
**«Հայ բուժակ», 1922 թվական, հուլիս**

Գոհար Կազմելեանը պատմում է «Հայ կին» հանդեսի 1925 թվականի մարտի համարում, որ իրենց շահառուներից Նազենի անունով մի կին, որը վերջերս էր ազատագրվել թուրքական ընտանիքից, ծննդաբերում է առողջ տղա երեխա, որը, սակայն, ժամեր անց անհասկանալի պատճառներով մահանում է: Կազմելեանը գրում է, որ փոխանակ այս պատճառով տխրելու, Նազենին ասում է, որ երեխայի մահը նրան հանգստացրել է, քանի որ նա «տառապանքի պտուղ» էր (Հավելված 1, Պատկեր 16):

Որբահավաք առաքելությունները խնդրահարույց էին այն իմաստով, որ երբեմն փոքր տարիքում առևանգված երեխաներն ինտեգրվում էին թուրքական ընտանիքներում, իսկ մեծ տարիքի աղջիկներին և կանանց վերադարձնելուց հետո համայնքը քամահրանքով էր վերաբերվում նրանց: «Հայ կին» հանդեսի որոշ համարներում կարելի է հանդիպել հոդվածներ, այսպես կոչված, «անկեալ[3]» կանանց մասին: 1920 թվականի օգոստոսի համարում խոսվում էր «անկեալ» կանանց օգնող մի կազմակերպության մասին, որը նրանց օգնում էր դուրս գալու թշվառ վիճակից: «Անկեալ» կանայք կարող էին լինել երիտասարդ կանայք ու

3. Անառակ, բարոյազուրկ:

աղջիկներ, որոնց ընտանիքները նրանց հետ չէին ընդունել ցեղասպանությունից հետո այս կամ այն պատճառով՝ թուրքական ընտանիքում հայտնվելու, թուրքից երեխա ունենալու և այլն: Շատ հնարավոր է, որ նրանցից շատերը ընտանիք չունեին, և չկար մեկը, ով կարող էր նրանց «խնամակալ» լինել, քանի որ հայ աղջիկներն անկախ իրենց տարիքից պետք է տղամարդ խնամակալ ունենային, իսկ ովքեր չունեին, համարվում էին որբ:

Հայ կանայք ցեղասպանության ընթացքում և հետո կորցրել էին իրենց մարմնի նկատմամբ անձեռնմխելիությունը և պարբերական բնույթ կրող սեռական բռնությունից հետո ստիպված էին նաև անցնել անցանկալի հղիության միջով, որը սեռական բռնություն վերապրած կանանց համար հատկապես տրավմատիկ կարող էր լինել: Բռնաբարությունն ունի ոչ միայն հոգեբանական, այլև ֆիզիկական ծանր հետևանքներ: Եվ հաշվի առնելով, թե ինչպիսի պատկերացումներ կային կանանց մասին, և ինչպիսի վերաբերմունքի էին արժանանում սեռական բռնություն վերապրողները՝ դժվար է ասել, թե արդյոք ժամանակի համայնքային պահպանողական առաջնորդները համապատասխան աջակցություն ցուցաբերում էին սեռական բռնության զոհերին՝ վերջիններիս կարիքները հոգալու համար: Սրա մեջ առավել ցավալի է հայ կանանց դերը, որոնք որպես ֆեմինիստներ էին ներկայանում: Սակայն, ինչպես Էքմեքչիօղլուն է գրում. «Քանի դեռ թուրքական պետության և Թուրքիայի հայերի միջև ուժային անհավասարություն կա, պարադոքսները կմնան հայ ֆեմինիստների ընկերները» (Recovering Armenia, 2016, էջ 160):




Պատկեր 6.
«Հայաստանի աշխատավորուհի», 1931 թվական

## ԽՍՀՄ. աբորտն աշխարհում առաջինը օրինականացրած պետությունը 1920-1936 թթ.

1920 թվականի նոյեմբերի 18-ին ԽՍՀՄ-ը դարձավ աշխարհում առաջին պետությունը, որն օրինականացրեց աբորտը: Ըստ Մայ Նակաչիի (2021)՝ սա արվեց, քանի որ ժամանակի իշխանությունները հավատում էին, որ կանայք ընտանիքում ենթարկվում էին շահագործման, և աբորտի իրավունքը նրանց հնարավորություն կտար ազատվելու այդ շահագործումից: Սա արվում էր ոչ թե կանանց վերարտադրողական իրավունքների իրացման, այլ բանվոր դասակարգի կանանց վերարտադրողական շահագործումից ազատելու համար, թեև խորհրդային բժիշկները շարունակում էին հավատալ, որ աբորտը կնոջ առողջության համար վնասակար է: Նրանք հավատում էին, որ սոցիալիստական պետության հաստատումից հետո կանայք այլևս աբորտ անելու կարիք չեն ունենա, քանի որ նրանց սոցիալական և նյութական բոլոր կարիքները բավարարված կլինեն: Առողջապահության ժողովրդական կոմիսարիատը և Արդարադատության ժողովրդական կոմիսարիատը աբորտը օրինականացնելու որոշումը հիմնավորում էին այսպես՝ «անցյալի բարոյական մնացուկները և ներկայիս տնտեսական ծանր պայմանները հարկադրում են կանանց մի մասին դիմելու այդ օպերացիային» (Հավելված 2, Պատկեր 27):



**Պատկեր 7. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի «Առողջապահություն» բաժնի նկարազարդումներից**

Այս ժամանակաշրջանի հայկական համատեքստը հասկանալու համար ուսումնասիրվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի (1924-1998) «Առողջապահություն» բաժինը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այս բաժնում տեղ գտած նյութերի մեծ մասը վերաբերում է ոչ թե կանանց, այլ մայրերին, այսինքն՝ մայր և կին լինելը կրկին նույնացվում են: Բաժինը հիմնականում ներառում է նյութեր նորածինների և երեխաների խնամքի վերաբերյալ (Պատկեր 7): Սակայն երբեմն հանդիպում են նաև սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և անպտղության վերաբերյալ նյութեր: Այս ֆոնին նաև անդրադարձ է կատարվում առանց բժշկի հսկողության վիժումներին: Օրինակ՝ 1925 թվականի նոյեմբերի համարում բժիշկը պատմում է անապահով աբորտի մի դեպքի մասին, որի հետևանքով կինը կարող էր մահանալ: Նյութը ավարտվում է հետևյալ տողերով. «Կանայք երբեք չպետք է դիմեն զանազան պառավական միջոցների երեխայից ազատվելու համար» (Պատկեր 8):

Միաժամանակ կան բազմաթիվ հոդվածներ, որոնք քննադատում են վաղ ամուսնությունները, ընտանեկան բռնությունը, ինչպես նաև ավանդական բժշկությունը: Հավել-

ված 2-ում կարող եք տեսնել մի հոդված, որը խստորեն քննադատում է տատմերների աշխատանքը՝ նրանց մեթոդները համարելով հնամենի և վտանգավոր:



ՅԵՐԲԵՔ ՎԻԺՈՒՄ ՄԻ ԱՐԵՔ ԱՌԱՆՑ ԲԺՇԿԻ ԽՈՐՀՐԴԻ

1925 թ. ձմեռվա ցուրտ օրերին էր, յերբ յեկան իմ հետևից, թե Հեղինե Մկրտիչյանը կանչել է ինձ։ Վեր կացա, շտապ գնացի և գտա Հեղինեյին անկողնու մեջ թուլացած ու գունատ ընկած։

— Ի՞նչ է պատահել, Հեղինե — հարցի յես։

— Վաննան լիքը ջրով դուրս էյի բերում, վեր ընկա և ինձնից արյուն սկսեց հոսել։

Յես չհավատացի նրա ասածին և շարունակեցի.

— Տես, Հեղինե, յեթե դու ինձ խաբես, ճիշտը չասես, վերջը վատ կլինի։

Այս խոսքերը ազդեցին նրան և նա լալով ասաց։

Այստեղ մեկ պառավ կին կար, նա ինձ անցուցկ (վիժում) արեց։

— Ո՞վ է այդ պառավը.

— Չգիտեմ։

— Վորտեղ է ապրում։

— Չգիտեմ։

Յես հասկացա, վոր նա պառավի ով լինելը ինձ չի ասելու։ Իսկույն ուղարկեցի մանկաբարձ բժշկի հետևից։ Բժիշկը քննելուց հետո հայտնեց, վոր միայն հիվանդանոցում կարող են բժշկել նրան։ Հեղինեյին կառք նստեցրին և տարան հիվանդանոց։ Բայց հիվանդանոցում նա շատ չըառողջացավ։ Յերկու ամսից ավելի բժշկվելուց հետո նա վերադարձավ տուն։ Յես գնացի նրան տեսության։ Հեղինեն նիհարել էր և սաստիկ գունատվել։

— Ա՜խ բժշկուհի, վորքան տանջվեցի յես իմ խելքից...

— Տեսնում ես, Հեղինե, վորքան վատ հետևանք ունեցավ քո սխալը. այդ արյունը նրանից է, վոր պտուղից կարմեր է ծակել արգանդիդ մեջ և պառավի ձեռները մաքուր չեն յեղել։ Վոչ վոք բացի բժշկից իրավունք չունի հղի կնոջ վիժում անելու, և յեթե հիվանդանոցում քո արգանդը մաքրած չլինեյին, այն ժամանակ դու մինչև անգամ կարող էյիր մեռնել։

Հաճախ այդ տգետ պառավները յերեխա վիժելու համար արգանդի մեջն են խոթում զանազան կեղտոտ գործիքներ, վորոնցով վարակում են արգանդը և կանացի հիվանդություններ են առաջ բերում։

Յերբեմն էլ արգանդը մաքրելու համար վորևէ սուր գործիք են բանեցնում, անզգուշությամբ պատռում արգանդը։ Այսպիսով առաջ են բերում արյան վարակում, վորովայնի բորբոքում. դա շատ ծանր հիվանդություն է և շատերը դրանից մեռնում են։

Բացի դրանից, յերբ կինը հաճախ վիժում է, նրա արգանդի մկանները (մսերը) այնքան թուլանում են, վոր մյուս անգամ նրանք չեն կարողանում իրենց մեջ պահել մեծացող պտուղը և հաճախ պտուղը արտաքսվում է՝ մոր արգանդից դեռ 2-3 ամսական հասակում և կինը չնայած իր կամ ամուսնու ցանկությանը յերեխա չի ունենում։

Կանայք յերբեք չպետք է դիմեն զանազան պառավական միջոցների յերեխայից ազատվելու համար։

ԲԺԻՇԿ

Պատկեր 8.
«Հայաստանի աշխատավորուհի», 1925 թվական, նոյեմբեր

1925 թվականի նոյեմբերի համարում «Թե ինչու է վնասակար վիժումը (աբորտը)» վերնագրով հոդվածում, բժիշկ Գ. Արեշյանը գրում է (Հավելված 2, Պատկեր 20-21).

> «Մենք գիտենք, թե ինչ տարբերություն կա ամուսնացած երեխա բերող և չբերող կնոջ մեջ: Երեխա բերող և շատ երեխաներ ունեցող կինը իր հավասարակշռությունը միշտ պաշտպանած փարթամ և նորմալ է լինում, մինչդեռ չբեր կինը (անծինը)՝ չորավուն, ջղային և ինչպես ասում են՝ «տանը մնացած» մի էակ է»:
>
> [...]
>
> «Ավելի հաճախ արհեստական վիժում [աբորտ] են կատարում մի քանի երեխա ունեցող մայրերը, ուրեմն առողջ կանայք»:
>
> [...]
>
> «Բայց հենց որ վիժեցնողի ձեռքը միջամտում, քայքայում է այդ հղիությունը, ստացվում է մի այնպիսի դրություն, որ կնոջ ամբողջ մարմինը նմանվում է առանց աղունի աշխատող մի ջրաղացի»:
>
> [...]
>
> «Վիժման բազմաթիվ և զանազան ձևերից-չարիքներից արգանդի քերելը համարվում է նվազագույն չարիքը, սրա համար է, որ օրենսդրությունը ճանաչում է միայն վիժման այդ օպերացիան, այսինքն՝ արգանդի քերելը, միայն այն պայմանով, որ այդ օպերացիան կատարվի բժշկի ձեռքով ու համապատասխան պայմաններում»:

Այս հոդվածից հասկանում ենք, որ քաղաքականություն մշակողները գիտեին, որ աբորտի ավելի հաճախ դիմում են բազմազավակ մայրերը, և որ աբորտ անելու ամենատարածված մեթոդը վիրաբուժականն է՝ արգանդի պատերը «քերելու» միջոցով:

1932 թվականի հոկտեմբեր-նոյեմբերի համարում բժիշկ Ալեքսանյանը «Բժշկի զրույցը աբորտի մասին» հոդվածում գրում է (Հավելված 2, Պատկեր 24-25).

> «Վիժման հարցերով զբաղվում են և բուրժուական երկրները, սակայն այնտեղ այդ հարցերը քննվում են միայն մի տեսակետով. այն է՝ արդյոք պետք է քրեական օրենքներով արգելել հղիության արհեստական ընդհատումը (վիժումը)՝ ելնելով սոցիալական ցուցանիշներից: Սակայն մեր Խորհրդային բժշկությունը և գրականությունը զբաղվում է գլխավորապես վիժման պատճառ հանդիսացող սոցիալ-կենցաղային պայմանների ուսումնասիրությամբ և այլ հարցերի հետազոտությամբ, թե արհեստական վիժումը ինչ հետևանքներ է ունենում կնոջ առողջության վրա»:

Այս հոդվածում նաև անդրադարձ կա ցարական իշխանությունների՝ աբորտի նկատմամբ վերաբերմունքին:

> «Առաջ ցարական կառավարությունը դատապարտում էր բանվորուհիներին և գեղջկուհիներին վիժում կատարելու համար և անուշադիր ու անպատիժ էր թողնում վիժում կատարողներին… Այժմ ԽՍՀՄ-ում ուղղիչ տներում նստած են այն տատմերները, ովքեր վիժում կատարելով են զբաղվում»:
>
> […]
>
> «Ամեն տարի հազարավոր կանայք զոհվում են, հաշմանդամ են դառնում աբորտից»:
>
> […]
>
> «Հղիության երկուսուկես ամիսն անցնելուց հետո ոչ մի դեպքում չպիտի թույլ տալ, որ վիժում կատարեն»:

Այսպիսով՝ զարմանալի չէ, որ հանդիպում ենք հոդվածներ, որոնք վերաբերում են երեխաների և մայրերի սոցիալական ապահովությանը, օրինակ՝ որ տատմերներին դիմելու գլխավոր պատճառներից մեկը մանկաբարձների սակավությունն էր, հատկապես գյուղական շրջաններում: Կամ որ մսուր-մանկապարտեզներ պետք է գործեն բոլոր գործարաններին կից, որպեսզի բանվորուհիները կարողանան և՛ աշխատել, և՛ իրենց երեխաների հետ լինել: 1931 թվականի «Դաշտային շարժական մսուրներ» վերնագրով հոդվածում ասվում է. «[Մայրության և մանկության պաշտպանության բաժինը պարտավոր է] սպասարկել աշխատավոր մորը այնպես, որ նա, ազատվելով իր երեխայի հոգսից, հանգիստ ու ամբողջովին նվիրվի արտադրության աշխատանքներին»: Հոդվածներ կան, որոնք առաջարկում են նպաստների բարձրացում: Սա թույլ է տալիս ենթադրել, որ հակաաբորտային հոդվածները, որ հանդիպում են թերթում, խնդիրը հասկանում են երկու՝ աբորտի կազմակերպման այն ժամանակի բժշկական մեթոդների և սոցիալական ապահովության տեսանկյուններից: Խորհրդային բժիշկները հավատում էին, որ աբորտը վտանգավոր բժշկական միջամտություն է, սակայն, հաշվի առնելով կանանց նյութական կամ, ինչպես նրանք էին ասում, «կենցաղային» շահը, աբորտը շարունակում էր օրինական մնալ ԽՍՀՄ-ում: Սա ենթադրում է, որ երբ գար մի ժամանակ, երբ իշխանությունները հավատային, որ սոցիալիստական պետությունը ամբողջությամբ կայացած է, աբորտը կրկին անօրինական կդառնար կանանց առողջությանը վնաս հասցնելու պատճառով:

## 1936 թվական աբորտի քրեականացում

1936 թվականին ԽՍՀՄ-ը ընդունեց նոր սահմանադրություն, այսպես կոչված՝ Ստալինյան սահմանադրությունը, որով քրեականացրեց աբորտը: Այս ընթացքում «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը շարունակում էր հոդվածներ հրապարակել աբորտի վտանգների և առողջական հետևանքների մասին:




**Պատկեր 9.**
**«Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հուլիս**

1936 թվականի ապրիլի համարում «Աբորտն ու նրա վտանգները» հոդվածում Ֆիզոթերապևտիկ ինստիտուտի գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ, բգթ Ի. Ասատուրովը բացատրում է բժշկական տեսանկյունից աբորտի վտանգների մասին (Հավելված 2, Պատկեր 26-27): Սա մեզ հնարավորություն է տալիս հասկանալու ժամանակի բժիշկների գիտական մոտեցումները: Սկզբում Ասատուրովը շեշտում է, որ դայակների ու տատմերների դիմելով՝ կանայք ավելի են մեծացնում աբորտի վտանգները: Նա խոսում է «ընդհատակյա աբորտների» մասին և պատմում, թե դրանք ինչպես են «վերջանում կնոջ մահով»: Նա խոսում է արգանդի մեջ զանազան գործիքներ մտցնելու հետևանքով փորոտիքին և որովայնի այլ օրգաններին վնաս հասցնելու մասին: Հետո շեշտում, որ նույնիսկ ամենափորձված ու ամենագետ բժշկի մոտ աբորտ անելիս խնդիրներ կարող են առաջանալ: Նա աբորտի գործընթացը «արգանդի քերում» է անվանում և ասում է, որ և՛ դրա ընթացքում, և՛ դրանից հետո բարդություններ են նկատվում, մինչև անգամ «արգանդի ծակվածք»: Նա նաև նշում է, որ կանայք կարող են վարակվել աբորտի ընթացքում: Սրա համար նա պատճառ է բերում «կանանց սեռական օրգանների, մանավանդ արտաքին սեռական օրգանների մաքուր» չլինելը՝ ասելով, որ բակտերիաները, որոնք գտնվում են կանանց սեռական օրգաններում, վարակի պատճառ կարող են դառնալ: Ասատուրովը նշում է աբորտների մեկ այլ հետևանք ևս՝ չբերությունը: «Մայրությունն այլևս նրա [չբեր կնոջ] համար հնարավոր չէ, իսկ երեխաներ ունենալը՝ անիրականալի ցնորք... Արհեստական վիժեցումները, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք բժշկական տեսակետից հաջող են կատարված, այնուամենայնիվ քայքայում են կնոջ օրգանիզմը, թուլացնում նրա նյար-

դային սիստեմը և կնոջը հասցնում են հոգեկան ծանր վնասվածք»:

Հոդվածի վերջին պարագրաֆը թույլ է տալիս հասկանալ խորհրդային իշխանությունների քաղաքականությունը.

> «Խորհրդային իշխանությունը, հաշվի առնելով ընդհատակյա աբորտների ամբողջ չարիքը, թույլ է տվել կատարել աբորտ հիվանդանոցներում, որտեղ ապահովվում են նրա առավելագույն անվտանգությունը: Բայց, դժբախտաբար, մինչև օրս ընդհատակյա աբորտները դեռևս չեն վերացված: Առանձնապես եռանդով գաղտնի աբորտիստները գործում են գյուղում, թույլատրելով կնոջն աբորտ անել: Խորհրդային իշխանությունն աբորտներն անվտանգ երևույթ չի համարում, առանձնապես լրջորեն պիտի լուծեն աբորտի հարցն առաջին անգամ հղիացած կանայք…
>
> Ուրեմն աբորտն անվնաս միջոցառում չէ: Ավելի լավ է աբորտ չանել: Բայց եթե այս կամ այն պատճառով կինն ստիպված է դիմելու աբորտի, ապա նա անպայմանորեն պետք է դիմի կոնսուլտացիա՝ օգնություն ստանալու համար:
>
> Հետևյալ հոդվածով մանրամասն կանգ կառնենք հակաբեղմնավորիչ միջոցների, այսինքն՝ այն միջոցների վրա, որոնք կնոջը պաշտպանում են հղիանալուց»:

Հատկանշական է հակաբեղմնավորիչների մասին հոդվածի անդրադարձը, ինչը ցույց է տալիս, որ այս պրոնատալիստական քաղաքականությունը կանանց բարօրությունը և ապահովությունը շարունակում էր հաշվի առնել: Սակայն, ըստ Նակաչիի (2021), ժամանակակից հակաբեղմնավորիչները զանգվածային հասանելիություն չունեին, և աբորտը շարունակում էր մնալ հակաբեղմնավորիչ մեթոդ:

1936 թվականի հունիսի համարը հատկապես լի է աբորտի մասին տարատեսակ կարծիքներով՝ թե՛ բժշկական, թե՛ իրավական, թե՛ հանրային տեսանկյուններից: Համարը սկսվում է մի երկար հոդվածով, որը մանրամասն բացատրում է աբորտն արգելելու պատճառները և այն պետական քաղաքականությունը, որը ԽՍՀՄ-ը որդեգրելու էր ընտանիքի և երեխաների սոցիալական ապահովության համար (Հավելված 2, Պատկեր 28-29): Այսպիսով՝ առաջարկվում էր արգելել բոլոր աբորտները՝ թե՛ բժշկական հաստատություններում, թե՛ տնային պայ-


Վա՜յ այն կնոջը, որը երեխա չունի, վա՜յ այն կնոջը, որը դեռ նա իր փոքրիկների քաղցրությունը չգիտե և [illegible] է զգում: Ցես կոմյերիտուհի յեմ և միաժամանակ մայր եմ. ո՜, որքան լավ է հնչում «մայր» բառը:

**Պատկեր 10. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, կոմերիտուհի Մարուսյա Լալայանը Երևանի ձեթ-օճառ կոմբինատից գրում է**

մաններում իրականացվող: Բացառություն էին սահմանվում այն դեպքերը, երբ հղիության շարունակությունը կնոջ կյանքի համար վտանգ էր ներկայացնում, կամ պտուղն ուներ ժառանգական հիվանդություններ: Այս երկու դեպքերում աբորտն իրականացվում էր բացառապես հիվանդանոցային պայմաններում: Օրենքից դուրս աբորտ իրականացնող բժիշկներին սպառնում էր 1-2 տարի ազատազրկում, իսկ հակասանիտարական պայմաններում և/կամ բժշկական կրթություն չունեցող անձանց կողմից իրականացված աբորտի դեպքում քրեական պատիժ առնվազն 3 տարի ժամկետով: Կնոջն աբորտի դրդելու համար սահմանվում էր մինչև 2 տարի ազատազրկում, իսկ օրենքից դուրս

## ԱԲՈՐՏԸ ՎՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է

Այդպես եմ մտածել յոթ-ութ տարի սրանից 12 տարի առաջ, յերբ ամուսինս Ֆրանսիայում Անդրկովկասյան Ուսանողական Միության Թռչակառու ուսանող եր, իսկ յես՝ անգործ բանվորուհի: Կուրծք եմ տվել ամեն տեսակ դժվարությունների: Ցավ ինչ քան ուրախ և յերջանիկ եմ զգում այսօր ինձ, յերբ տեսնում եմ առողջ և կենսուրախ պիոներ ու հոկտեմբերիկ բալիկներիս թռչունի նման թռչկոտելը և նրանց անձնվեր պաշտպանությունը Խորհրդային Իշխանության համար: Նրանք Մոպրի և Կարմիր Խաչի անդամ են «մենք փոքրիկ սանիտարներ կլինենք և Կարմիր բանակայինների վերքերը կկապենք» ասում են նրանք:

Կապիտալիստական յերկրներում կինը հղիանալիս մինչև վերջի ամիսը աշխատում է թաքցնել գործարանի վարչությունից, վախենալով թե չլինի իրեն դուրս շպրտեն գործարանից, իսկ մեզ մոտ ընդհակառակը, հղի կինը ուրախությամբ է դիմում համապատասխան մարմիններին իրեն հասանելիք յերկարատև արձակուրդն ու նյութական օժանդակությունը ստանալու: Կան և այնպիսի կանայք, վորոնք խուսափելով վորոշ դժվարություններից դիմում են «հեշտ» միջոցի-աբորտի (իհարկե բացառությունները հաշվի չեն), վտանգելով իրենց առողջությունը:

Խորհրդային կառավարության վերջին հրապարակված օրենքի նախագիծը՝ աբորտն արգելելու և բազմանդամ յերեխաներ ունեցող ընտանիքներին նյութական օժանդակություն ցույց տալու մասին, մեծ վոգևորություն է առաջ բերել նույնպես Ֆրանսիայից ներգաղթող կանանց մեջ: Բոլորի մեկ ցանկությունն այն է, վոր կառավարությունը 6-րդ յերեխան ծնվելիս օժանդակություն ցույց տա թեկուզ ավելի քիչ չափով:

Ա. ԹԵՐՋՅԱՆ



Իմ յերազանքն եր դաստիարակել յերեխա:

**Պատկեր 11.**
**«Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հուլիս**

աբորտ անող հղի կանայք տուգանվում էին մինչև 300 ռուբլի: Առաջարկվում էր նաև մեծացնել բազմազավակ մայրերին տրվող նպաստը, ինչպես նաև կանոնակարգել հղի կանանց նկատմամբ աշխատանքային խտրականության դեպքերը:




**Պատկեր 12.**
**«Հայաստանի աշխատավորուհի»,**
**1936 թվական, հուլիս**

Խորհրդային իշխանությունները հավատում էին, որ սոցիալական անապահովության պատճառով են կանայք դիմում աբորտի, և եթե պետությունը լուծեր երեխաների խնամքի ու ընտանիքների սոցիալական անապահովության հարցը, ապա կանայք այլևս չէին ցանկանա դիմել աբորտի: Նույն համարը լի է հայ կանանց հեղինակած տարատեսակ հոդվածներով, որոնք գոհ էին աբորտի արգելումից: Եթե մինչ այդ աբորտի խնդիրը դիտվում էր կնոջ առողջությանը վնասելու տեսանկյունից, ապա այս համարում պրոնատալիստական հայեցակարգն ակնհայտ էր: «Աբորտը ոճրագործություն է», «Իմ ուրախությունը երեխաներս են» վերնագրերը և շատ երեխաներ ունենալու կարևորությունը խրախուսելը համարում ամենուր է (Հավելված 2):

Հատկանշական է, որ հակաաբորտային թեմաներով հոդվածները մինչ այս ամբողջությամբ կենտրոնացած էին աբորտի՝ կնոջ առողջությանը հասցրած վնասների վրա, մինչդեռ 1936-ից նկատվում են նաև միլիտարիստական հայեցակարգեր: «Ես պատրաստվում եմ պաշտպանելու իմ պանծալի հայրենիքը»,- ասվում է 1936 թվականի հուլիսի հոդվածում: Սա արդեն որոշակի գենդերային դերեր թելադրելու և խորհրդային իշխանությունների գեոպոլիտիկ հաշվարկների մասին է խոսում:

## 1955 թվական աբորտի օրինականացում և կնոջ իրավունքի հաստատում

Աբորտը 19 տարի շարունակվեց անօրինական մնալ ԽՍՀՄ-ում: Այս ընթացքում երկիրն անցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի և տնտեսական խոր ճգնաժամի միջով: Երկրորդ համաշխարհային պատերազմի կորուստները հաշվի առնելով՝ աբորտների դեմ արշավն էլ ավելի սրվեց:

«Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը 1941 թվականից դադարեց տպագրվելուց և վերսկսեց հրապարակումը միայն 1958 թվականին: Այսպիսով՝ այդ տարիներից այս բաժնի համար երկրորդային աղբյուր է Մայ Նակաչիի հետպատերազմյան ԽՍՀՄ-ում վերարտադրողական քաղաքականության մասին գիրքը: 1936-1955 թվականների ընթացքում կանայք աբորտի միջամտությունը կազմակերպում էին ծանոթների և ոչ ֆորմալ ցանցերի միջոցով: Այս տարիներին հատկապես սրվել էին աբորտի կասկածանքով քաղաքացիների ոստիկանություն դիմելու դեպքերը: Այսպիսով՝ կանայք աբորտ անում էին տնային պայմաններում, առանց ցավազրկողների և համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանների: Կանայք իրենց կյանքի ընթացքում հինգից տասը աբորտ էին անում, և շատ կանայք իրենց կյանքում գոնե մեկ անգամ ստիպված էին լինում անցնել անմարդկային ձևով կազմակերպվող վիրահատական այս միջամտության միջով:

Խորհրդային Միությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից դուրս եկավ հաղթանակած, սակայն մարդկային և տնտեսական կորուստներն ահռելի էին ու աննախադեպ: Նիկիտա Խրուշչովը 1944 թվականի ապրիլի 13-ին հայտարարում է, որ խորհրդային իշխանությունների խնդիրը պատերազմից հետո կորսված բնակչության թվի վերականգնումն է, որպեսզի ապագայում ժողովրդագրական կայուն աճ լինի (Nakachi, 2021): Խորհրդային իշխանություններին տղամարդ բնակչության կտրուկ նվազումը մտահոգում էր երկու պատճառով. նախ՝ կանայք զուգընկեր չէին ունենա երեխաներ ունենալու համար, և ապա՝ աշխատանքային ռեսուրսների սակավության պատճառով: Ի տարբերություն պատերազմին մասնակցած ԱՄՆ-ի, որ երեխաների բում (baby boom) գրանցեց 1946-1964 թվականներին, ԽՍՀՄ-ը կորցրել էր արական սեռի 20 միլիոն բնակչի: Սա սեռերի անհավասարության էր հանգեցրել. 1944 թվականին 16-54 տարեկան բնակիչների շրջանում յուրաքանչյուր 100 կնոջ հաշվով կար միայն 28 տղամարդ (Nakachi, 2021): Այսպիսով՝ խորհրդային իշխանությունների գլխավոր քաղաքականությունը դարձավ մեռածներին ամեն գնով «փոխարինելը»:

Խրուշչովը 1944 թվականից առաջ էլ աչքի էր ընկել պրոնատալիստական քաղաքականության ջատագովությամբ: Նրա առաջարկով 1941 թվականին ամուրիների վրա հարկ նշանակվեց, որպեսզի ֆինանսավորվեն մանկատները, իսկ արդեն 1944-ին երկրում

խրախուսվում էր երկուսից ավելի երեխա ունենալը: 1944 թվականի Ընտանեկան օրենքի փոփոխությունը թիրախավորեց կանանց, մասնավորապես սահմանվեցին ավելի ծանր պատիժներ այն կանանց համար, որոնք կփորձեին աբորտ անել, ավելին՝ օրենքը սկսեց խրախուսել, որ տղամարդիկ արտամուսնական հարաբերություններից երեխաներ ունենան: Նման քաղաքականությունը խորհրդային պրոֆեսիոնալ խավը բաժանել էր երկու մասի. մի կողմում ֆինանսիստներն ու վիճակագրագետներն էին, որոնք ամեն գնով ցանկանում էին վերականգնել բնակչության կորուստները, մյուս կողմում բժիշկներն ու իրավաբաններն էին, որոնց խիստ հուզում էր կանանց և երեխաների առողջությունը այս տեսակի քաղաքականություն վարելու պայմաններում:

Ամեն ինչ փոխվեց 1955-ին, երբ ԽՍՀՄ առողջապահության միակ կին նախարարը՝ Մարիա Կովրիգինան, և շատ այլ կին բժիշկներ վկայություններ էին տալիս ԽՍՀՄ-ում անապահով պայմաններում կատարված աբորտների հետևանքով կանանց մահացության դեպքերի մասին: 1955-ի օրինականացումը ճանաչում էր իր կամքով աբորտի դիմելու կնոջ իրավունքը և, ի տարբերություն 1920-ի օրինականացման, արվում էր վերարտադրողական իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Կովրիգինան ինքն էլ երկար տարիներ ունեցել էր պրոնատալիստական հայացքներ և այդպիսի պետական քաղաքականություն էր վարել, սակայն, տեսնելով կանանց շրջանում անցանկալի հղիությունների հետևանքները, փոխել էր իր դիրքորոշումը: «Կինը պետք է իրավունք ունենա իր համար որոշում կայացնելու»,- ասել է Մարիա Կովրիգինան (Nakachi, 2021):

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Պատկեր 13.
2010 թվականի Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հարցերի հետազոտության (ՀԺԱՀ-2010) տիտղոսաթերթը (իրականացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից)[4]

4. Տե՛ս https://armstat.am/file/article/adhs_key_findings_arm.pdf

Ըստ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ աբորտն օրինական է մինչև 12 շաբաթական հղիությունների դեպքում՝ կնոջ դիմումի համաձայն: Բժշկասոցիալական ցուցումների դեպքում կնոջ համաձայնությամբ մինչև 22 շաբաթական հղիությունը նույնպես կարող է ընդհատվել: Բժշկական ցուցումները վերաբերում են այն դեպքերին, երբ մոր և պտղի գոյությունը անհամատեղելի է առողջական խնդիրների կամ պտղի որոշակի հիվանդությունների կրող լինելու պատճառով: Սոցիալական ցուցումները հետևյալն են.

- ամուսնու մահը հղիության ընթացքում,
- ամուսիններից մեկի անազատության մեջ հայտնվելը,
- հղիության ընթացքում ամուսնալուծությունը,
- բռնաբարության հետևանքով հղիությունը:

10-րդ հոդվածի 5-րդ կետով պետությունը պարտավորեցնում է աբորտի ծառայություն մատուցող բժիշկներին կնոջը աբորտից առաջ և հետո հակաբեղմնավորիչ մեթոդների մասին տեղեկություն տրամադրել:

Աբորտի այս օրենքը ժառանգություն է Խորհրդային Հայաստանից, սակայն բազմաթիվ խնդրահարույց հարցեր կան բուժսպասարկման որակի և գաղտնիության, ինչպես նաև դրա հասանելիության վերաբերյալ: Ավելին՝ եռօրյա պարտադիր սպասելաժամանակի մասին օրենքի դրույթը հավելյալ սահմանափակումներ է առաջ բերում աբորտի ծառայություններ փնտրող մարդկանց համար: Սա հատկապես վնասակար է գյուղաբնակ կանանց համար՝ հաշվի առնելով գյուղական համայնքներում բուժհաստատությունների պակասը և աբորտի ծառայություն ստանալու համար քաղաքներ հասնելու կարիքը:

Կովկասյան բարոմետրի տվյալներով[5] հանրային կարծիքը աբորտի վերաբերյալ մեծ մասամբ բացասական է: 2011-2017 թվականների տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության մեծամասնությունը այն հարցին, թե արդյոք կարելի է արդարացնել աբորտը, պատասխանել է, որ այն «չի կարող արդարացված լինել»:

Ցավոք, այս տեսակի պատկերացումները դեռևս տարածված են նաև բուժաշխատողների շրջանում: Հովհաննիսյանի (2019) բուժաշխատողների հետ կատարած հետազոտությունը ցույց է տալիս, թե հակաաբորտային ինչ դիրքորոշում ունեն բժիշկները և բուժքույրերը, և ինչպես են նրանք հաճախ համոզում կանանց, որ աբորտի չդիմեն:

---

5. The Caucasus Research Resource Centers. “Time-series dataset Armenia”. Retrieved through ODA http://caucasusbarometer.org on 3/12/2021




**Ձև 1.**
**Աբորտի վերաբերյալ դիրքորոշումները Հայաստանում 2011-2017 թվականներին**

> «Հարցազրույցները ցույց տվեցին, որ աբորտի նկատմամբ բժիշկների և բուժքույրերի վերաբերմունքը միանշանակ բացասական է, համենայն դեպս խոսքային տիրույթում: Աբորտը մասնագետների կողմից դիտարկվում է մարդասպանություն, սխալ արարք, չգիտակցված վարք» (Հովհաննիսյան, 2019):

Սրա համար նրանք որպես պատճառ ներկայացնում էին ազգի պահպանումը: «Լավ է մեր ազգի, հայերի համար»,- մեջբերելով Արմավիրի մարզից մի բուժքրոջ խոսքերը՝ գրում է Հովհաննիսյանը: Մեկ այլ պատճառ է միգրացիան, որի հետևանքով հատկապես գյուղաբնակ շրջանները դատարկվում են: Այն հարցին, թե ինչու են մարդիկ դիմում աբորտի, բժիշկները նշում են աղքատությունը և սոցիալական անապահովությունը: Շատ բժիշկներ խնդիր չեն տեսնում արդեն իսկ մի քանի երեխա ունեցող մայրերի դեպքում, սակայն առաջնեկի դեպքում, ինչպես իրենք են ասում, ամեն ինչ անում են, որ հետ պահեն կնոջը նման որոշում կայացնելուց: Այս հետազոտության բացահայտումները նաև հաստատվում են մի շարք հայտնի բժիշկների լրատվական ծառայություններին տված հարցազրույցներում (Մկրտչյան, 2020):

Հայաստանում իրականացվում է երկու տեսակի աբորտ՝ դեղորայքային և վիրահատական: Դեղորայքային աբորտն իրականացվում է մինչև 8 շաբաթական հղիության, իսկ վիրահատականը՝ մինչև 12 շաբաթական և ավելի օրենքով սահմանված ժամկետներում:

Բժիշկները շարունակում են առաջ տանել այն սխալ կարծիքը, որ աբորտից հետո կարող է անպտղություն առաջանալ, թեև բազում հեղինակավոր բժշկական ուսումնական հաստատություններ շարունակում են պնդել, որ աբորտ անելու և անպտղության միջև

կապ չկա, ավելին՝ միայն անապահով պայմաններում (տնային պայմաններում) կամ ոչ պատշաճ բժշկական սպասարկման հետևանքով կարող է առաջանալ ներքին սեռական օրգանների վարակ և հետագայում՝ անպտղություն, այն էլ վարակը ժամանակին չբուժելու հետևանքով (American College of Obstetricians and Gynecologists (ACOG), n.d.; Nall, 2020)։ Այսպիսով՝ աբորտի հետևանքով բարդացումները, այդ թվում՝ անպտղու- թյունը, կարող են ի հայտ գալ ոչ թե աբորտի մեթոդների, այլ մեծ մասամբ բժիշկների սխալների և թերացումների հետևանքով։ Բուժաշխատողները Հովհաննիսյանին (2019) պատմում են, որ գինեկոլոգների շրջանում որոշ հիերարխիաներ կան, որով նրանք բաժանվում են «ծնունդ տվողների» և «կյանք վերցնողների»։ Սա էլ իր հերթին ցույց է տալիս բժիշկների պրոնատալիստական և պրոլայֆ դիրքորոշումները։

Անուշ Պողոսյանը՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի տնօրենը, որ և վերարտադրողական առողջության երկար տարիների փորձ ունեցող մասնագետ է, աբորտի մասին խոսելիս մտաբերում է գյուղաբնակ բուժաշխատողի հետ ունեցած իր զրույցը, որտեղ վերջինս նշել է, որ բժիշկները հաճախտնտեսական շահ ունեն աբորտի ծառայություն չմատուցելու մեջ, քանի որ  ծննդաբերության բուժսպասարկումն ավելի թանկ է, քան աբորտի ծառայությունը։ Մեկ այլ խնդիր է եռօրյա պարտադիր սպասելաժամանակը, որը, ըստ Պողոսյանի, խոչընդոտում է կանանց իրավունքի լիարժեք իրացումը և աբորտի հասանելիության լուրջ հիմնախնդիր է։ Հատկապես գյուղաբնակ կանանց համար եռօրյա սպասելաժամանակը ավելորդ խոչընդոտներ է առաջացնում։ «Կանանց չլսված պատմություններ» ժողովածուից (2020) բերենք մի հատված, որը ցույց է տալիս աբորտի ծառայություններ փնտրող գյուղաբնակ կնոջ ապրումները.

> «Ես ահավոր ապրումներով հետ գնացի մեր գյուղ, ախր ո՞նց կարամ երեք օրից նորից խաբեմ ու գնամ քաղաք, իսկապես սա ինձ համար ահավոր վիճակ էր։ Համ էլ ախր վախենում էի, որ ամուսինս կիմանա, որ խաբել եմ։ Այդ երեք օրը ահավոր էր ինձ համար, էդ որոշման հետ ապրել երեք օր, ոչ մեկը իսկապես դա չի հասկանա, մինչև չանցնի էդ ամենի միջով։ Հունվարի 20-ն էր, լավ եմ հիշում, ասացի՝ առավոտ լույսը բացվի, էլի գնամ, ասեմ՝ թուղթը վերցնելու եմ, գնամ քաղաք։ Բայց առավոտը ահավոր ձյուն էր եկել, ճանապարհը փակվել էր, էդ օրը գազելներն էլ չէին աշխատում։ Սպասում էինք, որ տրակտորը գա, մաքրի ճանապարհները։ Ահավոր տագնապի մեջ ընկա, որովհետև էս ձյունը կարող էր երկար գալ։ Ես չեմ կարող նկարագրել իմ ապրումները՝ վախ, մեղքի զգացում, տագնապ, սաղ խառնվել էին մոտս։ Յոթ օր հետո միայն կարողացա քաղաք գնալ, գնացի էլի բժշկուհու մոտ, ասաց՝ ուշացրել ես, 12 շաբաթդ անցել է, էլ ինչ աբորտ, մոռացի, գնա տուն, երկուշաբթի կգաս, որ հաշվառենք»։

Կինը, շարունակելով պատմությունը, ասում է՝ ծանոթից լսել էր, որ խոտաբույսերից թուրմ կարող է պատրաստել, որը վիժում կառաջացնի: Կինը խմում է թուրմը, և երկու ժամ անց արյունահոսություն է սկսվում: Առավոտյան նրան տանում են հիվանդանոց, և բժիշկները վիրահատական միջամտություն են կատարում: Բուժաշխատողներից մեկը կնոջը հետո ասում է, որ մահանալուց է փրկվել: Ըստ Պողոսյանի՝ հազվադեպ չեն այսպիսի դեպքերը, երբ հարևաններից ու ծանոթներից հարցնելով՝ կանայք լսում են որոշ դեղերի և դրանց դեղաչափերի մասին և առանց բժշկի հետ համաձայնեցնելու օգտագործում են դրանք: Իսկ երբ դեղորայքային աբորտը չի հաջողվում, վատագույն դեպքում նրանք կարող են հայտնվել հիվանդանոցում արդեն մահամերձ վիճակում, երբ անգամ շտապ միջամտությունը նրանց կյանքը չի կարող փրկել: Դեղորայքային աբորտի համար կանայք հաճախ օգտագործում են միզոպրոստալ (սայտոտեկ): Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 2016 թվականի հետազոտության՝ հատկապես գյուղական բնակավայրերում դեղորայքային աբորտն ունի լայն տարածում (UNFPA Armenia, 2010): Կանայք խմում են միզոպրոստալը, որը կծկումներ է առաջացնում, բայց չեն խմում երկրորդ դեղահաբը՝ միֆեպրիստոնը, որը պիտի վիժում առաջացնի. պատճառներից մեկը անտեղյակությունն է ու նաև այն փաստը, որ ի տարբերություն առաջին դեղահաբի՝ երկրորդն ավելի թանկ է (Հովհաննսիյան, 2019):

Վիրահատական աբորտի երկու տեսակ կա՝ կյուրետաժ («քերելու» մեթոդը) և վակուում-ասպիրացիա:[6] Վակուում-ասպիրացիան վիրահատական աբորտի մեթոդների մեջ ամենաանվտանգն է: Այն սովորաբար արվում է տեղային կամ ամբողջական անզգայացմամբ: Այս գործընթացի խնդրահարույց մասն այն է, որ անզգայացման համար հղի անձը առանձին պետք է վճարի և եթե դրա համար ֆինանսական միջոցներ չունի, ապա վիրահատությունը կարվի առանց անզգայացման:[7] Սա էլ ավելորդ հոգեբանական ճնշում է գործադրում հղի անձի վրա և հավելյալ խոչընդոտ է վերարտադրողական իրավունքների իրացման տեսանկյունից:

Քանի որ Հայաստանում առողջապահական համակարգը հիմնականում մասնավոր դաշտի կողմից է վերահսկվում, դժվար է ասել, թե յուրաքանչյուր բուժկենտրոն աբորտի բուժսպասարկման համար ինչ բիզնես մոդել ունի՝ սա մեկ այլ հետազոտության առարկա է: Կան բուժկենտրոններ որտեղ հղի անձը առանձին պետք է վճարի անզգայացման համար և կան նաև բուժկենտրոններ որտեղ անզգայացման վճարը հաշվարկված է բուժսպասարկման վճարի մեջ: Սրանով կարող ենք բացատրել այն փաստը, թե ինչու աբորտի բուժսպասարկումը տարբեր բուժկենտրոններում տարբեր վճարներով է իրականացվում:

6. Սա ճշտվել է Հայաստանի Մանկաբարձ-գինեկոլոգների հայկական ասոցիացիայից, «Էրեբունի» և «Շենգավիթ» բժշկական կենտրոնների աբորտի միջամտություն իրականացնող բժիշկներից:

7. Թև 2017 թվականի ՀՀ կառավարության N 180 որոշման 23 կետի համաձայն աբորտը պետք է իրականացվի տեղային կամ ընդհանուր անզգայացմամբ (տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=111980):

Ըստ Հովհաննիսյանի (2019), անզգայացումից հրաժարվելու երկու այլ պատճառ կա: Առաջինը ժամանակի սղությունն է. «Մարդ կա, գալիս ա, մեքենան ներքևը ապասում ա, ուզում ա շուտ անի գնա: Թուղթ ա ստորագրում, որ չի մնում ու գնում ա» մեջբերում է Հովհաննիսյանը (2019, էջ 21): Երկրորդ պատճառը ամուսնուց գաղտնի անելն է «Գալիս են, ասում են՝ հանկարծ ամուսինս չիմանա, որ հղիացել եմ…» մեջբերելով Արմավիրի մարզից մի բուժքրոջ գրում է Հովհաննիսյանը (2019, էջ 21):

Չոնգի և մյուսների հետազոտությունը[8] (2009) փաստում է, որ ընդամենը 12 տարի առաջ վիրահատական աբորտի մեթոդները Հայաստանում ժամանակակից բժշկությանը համընթաց չեն եղել, և բժիշկները լավ ծանոթ չեն եղել դեղորայքային աբորտին: Օրինակ՝ առաջարկություններում հեղինակները գրում են, որ մեխանիկական դիլատացիայի կարիք չկա առաջին եռամսյակում վաղ հղիության դեպքում, իսկ տեղային անզգայացումն ավելի ճիշտ է, քանի որ ի տարբերություն ընդհանուր անզգայացման՝ ավելի քիչ է նպաստում արյունահոսությանը, և պացիենտն ավելի արագ է վերականգնվում դրանից հետո: Թե որքանով են Հայաստանի ամբողջ մասշտաբով բժիշկները շարունակում հնացած մեթոդներով աբորտի բուժսպասարկում իրականացնել, ավելի համապարփակ հետազոտության առարկա է: Այնուամենայնիվ, տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ Հայաստանում աբորտի օրինականության և տեսակների մասին ամբողջական իրազեկվածության խնդիր կա, ինչպես նաև կարիք կա բուժսպասարկողներին աբորտի նոր մեթոդների համար վերապատրաստելու, ինչը թույլ կտա երկրում պատշաճ բուժսպասարկում կազմակերպել: Հղի անձանց անտեղյակությունը և բժիշկների պրոնատալիստական և պրոլայֆ մոտեցումները լուրջ խոչընդոտներ են վերարտադրողական իրավունքների իրացման համար:

## Սեռով պայմանավորված կամ սելեկտիվ աբորտներ

Հայաստանում աննախադեպ բարձր են սեռի նախապատվությամբ պայմանավորված կամ սելեկտիվ աբորտների ցուցանիշները: Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տվյալների՝ եթե 2015 թվականին տղա-աղջիկ հարաբերակցությունը 115-100 էր, ապա 2019 թվականին տղաների թիվը 5-ով նվազել է՝ 110-100 (Մկրտչյան, 2020): Աշխարհում այս ցուցանիշով Հայաստանը երրորդն է՝ զիջելով միայն հարևան Ադրբեջանին և առաջին տեղում հայտնված Չինաստանին: 2016 թվականին սելեկտիվ աբորտներն արգելվեցին օրենքում փոփոխություն անելով՝ «բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է» (Համբարձումյան, 2020):

8. Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ:

Մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ Հայաստանում սելեկտիվ աբորտների հիմնական պատճառներից մեկը տղա երեխաներին նախապատվություն տալն է՝ սոցիալական և տնտեսական տեսանկյուններից: Սոցիալական տեսանկյունը հասարակության մեջ տղամարդկանց՝ կանանց համեմատ արտոնյալ կարգավիճակն է, իսկ տնտեսականը՝ դրանից բխող նյութական առավելությունները աշխատաշուկայում, մասնավոր սեփականության հարցերում և այլն: Ըստ ԵՊՀ Գենդերային հետազոտությունների կենտրոնի (2014) հետազոտության՝ տղա երեխային նախապատվություն տալը առաջին հերթին կապված է ազգանվան փոխանցման հետ, քանի որ երեխան կրում է հոր ազգանունը և «պատկանում է հայրական տոհմին»: Հաջորդը ծնողների մասին հոգ տանելու խնդիրն է.

> «Ըստ հարցվողների մեծամասնության՝ որքան էլ դուստրը ցանկանա օգնել ծնողներին, միևնույնն է, նա տնտեսապես կախված է ամուսնու որոշումներից և միջոցներից, իսկ ամուսինը, իհարկե, կնախընտրի աջակցել սեփական ծնողներին, քան կնոջ հարազատներին: Բարձրագույն կրթությամբ քաղաքաբնակ կանայք նշեցին նաև, որ այսօր ավելի հաճախ կարող են տեսնել կանանց, որոնք անկախ են և ունեն «սեփական, ամուսնուց անկախ եկամուտ», սակայն այդպիսի կանանց թիվը քիչ է, և այսօրվա գործազրկության պայմաններում մեծամասնությունը դեռևս կախված է ամուսիններից՝ «նայում են նրանց ձեռքին»: Հարցվողներից մեկը նշեց, որ (պահպանելով հարցվողի լեզվական ոճը) «տղա ունենալը ուրախություն է, իսկ ով աղջիկ է ունեցել, նրա գլուխը կախ է, որ ծերանան, աղջիկը հո չի՞ կարա խնամի, տնփեսա գնալն էլ լավ տղի համար ամոթ է...» (Ոսկանյան, 2014, էջեր 11–12):

Գյուղական վայրերում այլ պատճառներ են տղաներին որպես աշխատուժ պատկերացնելը և նրանց հետ ընտանիքի բարեկեցության հոգսերը կապելը: Մեկ այլ պատճառ էլ արտագնա աշխատանքի մեկնող հայրերի հարցն է, որոնք ցանկանում են որդիներ ունենալ, որ վերջիններս հոգ տանեն ընտանիքի մասին իրենց բացակայության ժամանակ: Սա ցույց է տալիս սելեկտիվ աբորտի ազդեցությունը ոչ միայն աղջիկների, այլև տղաների վրա՝ գենդերային դերերը և սպասելիքները արդարացնելու տեսանկյունից:

Սելեկտիվ աբորտների հիմնախնդրի մեկ այլ կողմ է դրանց քաղաքական շահագործումը: Սելեկտիվ աբորտները հաճախ օգտագործվում են հակաաբորտային քարոզարշավներում, որտեղ փորձ է արվում սելեկտիվ աբորտների հիմնախնդիրը դարձնել աբորտների հասանելիության, իսկ դրանց դեմ պայքարը՝ աբորտների սահմանափակման հարց:




**Պատկեր 14.**
**«Պրոլայֆ» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջից**

2013 թվականից սկսած և հատկապես 2018 թվականից հետո Հայաստանում մեծ թափ են հավաքել հակագենդերային շարժումները, որոնց մի մասը նաև կենտրոնացած է վերարտադրողական իրավունքների ու առողջության հանդեպ սահմանափակումներ առաջ քաշելու վրա: Համապարփակ սեռական դաստիարակության բացակայությունը, հակաբեղմնավորիչների մասին թերի իրազեկվածությունը, բժշկական հաստատությունների խտրական վերաբերմունքը նպաստում են անցանկալի հղիությունների և անապահով պայմաններում կատարվող աբորտների աճին:

2020 թվականին ԱԺ Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ, ընդդիմադիր «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Նաիրա Զոհրաբյանը հայտարարեց.

> «Հայաստանում սեռով պայմանավորված հղիության ընդհատումներն իսկապես բավականին մեծ թիվ են կազմում, և այստեղ, այո՛, մենք ունենք նաև չծնված երեխայի իրավունքի հետ կապված խնդիր, դա արձանագրել են նաև միջազգային կառույցները, և դա փաստ է»:

Բարեբախտաբար, Զոհրաբյանը օրենքը չներկայացրեց ԱԺ, և հարցը միայն հանձնաժողովում քննարկվեց: Սակայն հակաաբորտային քարոզարշավները երկրում դեռ շարունակվում են: Այս տարվա ընթացքում Երևանի փողոցներում սկսեցին հայտնվել «Պրո-լայֆ» ՀԿ-ի կազմակերպած «Աղջիկը պարգև է» քարոզարշավի պաստառները: Հանրությանը հայտնի դեմքերը և հասարակական գործիչները պատկերված են այդ պաստառներում իրենց աղջիկ երեխաների հետ: Բոլոր պաստառների ներքևի հատվածում գրված է. «Ամեն տարի ՀՀ-ում չի ծնվում 1400 աղջիկ սեռով պայմանավորված աբորտների պատճառով»: Առաջին հայացքից պաստառները քարոզում են աղջիկ երեխաներին գնահատելու և նրանց դերը հասարակության մեջ մեծացնելու գաղափարը:




**Պատկեր 15.**
**«Պրոլայֆ» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջից**

Սակայն ՀԿ-ի ֆեյսբուքյան էջի հպանցիկ քննությունը ցույց է տալիս, որ այն զբաղված է ոչ թե հասարակության մեջ կանանց դերի բարձրացմամբ, այլ հակաաբորտային քարոզչությամբ, ինչը հենց ՀԿ-ի անունից էլ կարելի է ենթադրել: Նրանց կարգախոսի ավելի խոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռով պայմանավորված աբորտներում նրանք մեղադրում են ոչ թե հայրիշխանական հասարակությունում կանանց ստորադասումը,, այլ աբորտների հասանելիությունը: Սելեկտիվ աբորտների խնդրահարույց մասը «սելեկտիվն» է, սակայն այս տեսակի կառույցները ջանք չեն խնայում դա որպես աբորտների հասանելիության խնդիր ներկայացնելու: Կանանց նկատմամբ խտրականությունը և դրանով պայմանավորված սելեկտիվ աբորտները նշան են սեքսիզմի ու կնատյացության գերակայման, մինչդեռ աբորտն արգելելով ու կնոջը ընտրության հնարավորությունից զրկելով՝ ամրապնդվում է հայրիշխանական համակարգը, որը կին լինելը դարձնում է ոչ ցանկալի: Այսպիսով՝ սելեկտիվ աբորտը ոչ թե աբորտի հասանելիության, այլ կնատյացության հարց է, և շատ կարևոր է այս հիմնախնդրի ճիշտ ձևակերպումը, որպեսզի սեռով պայմանավորված աբորտների պատճառը, այն է՝ կանանց նկատմամբ խտրականությունը, մեկ այլ խնդրով՝ աբորտների արգելքով չլուծվի քաղաքական որոշումներ կայացնողների կողմից: Սելեկտիվ աբորտը պտղի նկատմամբ բռնություն չէ, ինչպես աբորտի ընդդիմախոսներն են ասում «աղջիկ երեխայի սպանություն» կամ «չծնված երեխայի իրավունք», այլ տղայի նախապատվությամբ ընտրություն և հիմնախնդրի լուծումը գենդերային անհավասարության և գենդերային դերերի փոփոխման մեջ է: Իրենց հակաաբորտային քարոզարշավում, ինչպես Պատկեր 14 և 15-ն են ցույց տալիս, նրանք օգտագործում են իրականությանը թե՛ կենսաբանական, թե՛ իրավական տեսանկյուններից չհամապատասխանող պատկերներ՝ հանրության շրջանում տպավորություն ստեղծելով, թե Հայաստանում օրինական է երրորդ եռամսյակում ըստ ցանկության աբորտ իրականացնելը: Սա արվում է միտումնավոր և հանրությանը մոլորեցնելու նպատակ ունի:

Հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը նպաստելու փոխարեն այս տեսակի կառույցները զբաղված են կանանց կյանքն ավելի բարդացնելով: Այս տեսակի կառույցները չպետք է իրենց հռչակեն պրոլայֆ (բառացի՝ «կողմ կյանքին»), քանի որ նրանց քարոզած քաղաքականության հետևանքով մեծանում է անապահով աբորտների թիվը, և հազարավոր կանանց կյանքեր վտանգի են ենթարկվում: Այս տեսակի կառույցները միջոցներ չեն ձեռնարկում համապարփակ սեռական դաստիարակության, հակաբեղմնավորիչ միջոցների կամ ընդհանրապես կանանց իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Ինչպես 100 տարի առաջ եկեղեցական ու պահպանողական ուժերն էին աբորտը որակում «սպանություն», նույնը անում են նրանք հիմա՝ այս անգամ հիմնովին անտեսելով ժամանակակից բժշկության և գիտության առաջընթացն այս ոլորտում:

Հայաստանում, ինչպես շատ երկրներում, հիմնախնդիրը ճիշտ ձևակերպված չէ, ինչն արվում է թե՛ միտումնավոր, թե՛ անտեղյակության հետևանքով: Այդ իսկ պատճառով

շատ կարևոր է քաղաքացիական հասարակության և հատկապես ֆեմինիստական կառույցների ներգրավվածությունը այս հիմնախնդրին վերաբերող քաղաքականության մշակման մեջ: Ի վերջո ոչ ոք ավելի շատ շահագրգռված չէ կանանց նկատմամբ խտրականության վերացմամբ, քան ֆեմինիստները:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


American College of Obstetricians and Gynecologists (ACOG). (n.d.). *Abortion Care.* Retrieved November 26, 2021, from https://www.acog.org/en/womens-health/faqs/induced-abortion

Chong, E., Tsereteli, T., Vardanyan, S., Avagyan, G., & Winikoff, B. (2009). Knowledge, attitudes, and practice of abortion among women and doctors in Armenia. *The European Journal of Contraception & Reproductive Health Care: The Official Journal of the European Society of Contraception*, 14(5), 340–348. https://doi.org/10.3109/13625180903131348

Ekmekcioglu, L. (2013). A Climate for Abduction, a Climate for Redemption: The Politics of Inclusion during and after the Armenian Genocide. *Comparative Studies in Society and History*, 55(3), 522–553.

(2016). *Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey*. Stanford University Press.

Haddad, L. B., & Nour, N. M. (2009). Unsafe Abortion: Unnecessary Maternal Mortality. *Reviews in Obstetrics and Gynecology*, 2(2), 122–126.

Nakachi, M. (2021). *Replacing the Dead: The Politics of Reproduction in the Postwar Soviet Union*. Oxford University Press. https://doi.org/10.1093/oso/9780190635138.001.0001

Nall, R. (2020, January 16). *Fertility After Abortion: Does Abortion Affect Fertility?* Healthline. https://www.healthline.com/health/womens-health/can-abortion-cause-infertility

Pollitt, K. (1997, May 1). *Abortion in American History*. The Atlantic. https://www.theatlantic.com/magazine/archive/1997/05/abortion-in-american-history/376851/

UNFPA Armenia. (2010). *Report on public inquiry into enjoyment of sexual and reproductive health rights in Armenia*. UNFPA Armenia. https://armenia.unfpa.org/en/publications/report-public-inquiry-enjoyment-sexual-and-reproductive-health-rights-armenia

Բոստոնի կանանց առողջության գրքի կոլեկտիվ. (2010). *Մենք ու մեր մարմինը* (Խաչիկյան Մերի, Trans.). Գասպրինտ:

Համբարձումյան Հասմիկ. (2020, May 4). «Աղջիկ լինի՝ կհանես, մինչև տղա ունենանք». Սելեկտիվ աբորտների նվազման միտումները հուսադրող, բայց դեռևս մտահոգիչ են. *MediaLab Newsroom-Laboratory*. https://medialab.am/62305/

Հովհաննիսյան Սիրան. (2019). *Հղիության արհեստական ընդհատման*

*գործընթացի վերաբերյալ մասնագետների դիրքորոշումները Հայաստանի տարբեր բուժհաստատություններում* [Հետազոտություն]. Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ:

Մկրտչյան Անուշ. (2020, November 10). Ըստ բժշկի՝ հղիության արհեստական ընդհատման արգելքի դեպքում ապօրինի գործունեությունը ավելի մեծ թափ կհավաքի. «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայան. https://www.azatutyun.am/a/30831988.html

Ոսկանյան Աննա. (2014). *Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները որպես ընտանիքում գենդերային խտրականության արտահայտում*. ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն. http://www.ysu.am/files/Anna%20Voskanyan%20arm.pdf

# ՀԱՎԵԼՎԱԾ 1.

# «ՀԱՅ ԿԻՆ» ՀԱՆԴԵՍԻՑ [9] ՀՈԴՎԱԾՆԵՐ


174

ԲՌՆԻ ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԴՐՈՒԱԾ
ԴԵՌԱՏԻ ՄԱՅՐԵՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿԸ
ԵՒ
ԱՆՈՆՑ ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ ԶՐԿԱՆՔՆԵՐԸ

Ահաւասիկ շատ կարեւոր խնդիր մը որու վըրայ կ'արժէ որ խորհինք մենք կիներս։

Ի՜նչ աւելի արգահատելի, զարհուրելի կացութիւն քան այն նորատի, գրեթէ տղայ տարիքնուն մէջ բռնի մայրութիւն զգեցած դժբախտ աղջիկներու վիճակը։ Հազիւ թէ աշխարհիս ինչ ըլլալը ըմբռնելու չափ հասունցած ինկած են ճիւաղներու ձեռք և անոնց կիրքերուն խաղալիքը ըլլալէ յետոյ, այժմ մայր եղած կը քաշկռտեն իրենց գոյութիւնը անիծելով աշխարհն ալ, ծնած զաւակն ալ։ Ոմանք օրինաւոր ամուսիններ ունեցած են թէեւ, (շատեր ակամայ), բայց իրենց ընտանեկան կացութիւնը. իրենց ամէն պիտոյքէ զուրկ վիճակը և տգիտութիւնը միացած, զիրենք բերած է այնպիսի վիճակի մը որ, երջանիկ մօր մը զգալիք գոհունակութիւնը տեղի տուած է դառն յուսախաբութեան և այս իսկ պատճառով իրենց ծնած զաւակը խնամելն իսկ անտանելի դարձած է. աւա՜ղ։

Շատեր դեռ իրենք մայրական խնամքի պէտք ունին. չգիտեն թէ ի՛նչ է մայրութիւնը, թէ ինչպէս կը խնամուի ու կը սիրուի զաւակ մը։ Ամէն օր տառապելով, աղքատութիւնը իրենց շատ մօտը տեսնելով, ամէն բանի չգոյութիւն զգալով, յուսահատած են և կ'աղօթեն որ մեռնին զաւակները. որովհետև իրենց տառապանքին պատճառը այդ զաւակներուն գոյութեան մէջ կը գտնեն։ Տխուր վիճակ, չէ՞։

Այդ դժբաղդ դեռատի կիներու ծննդաբերութիւնն ալ դժնդակ է, տառապելով, լեռներ ու ձորեր անցեր և եկեր հասեր են հիւանդանոց ծնելու համար զաւակնին։ Երբեք չի տեսնուիր այն սովորական անճառելի երանութիւնը՝ իրենց դէմքին վրայ, երբ աշխարհ կը բերեն այդ բռնի սիրոյ դառն պտուղը։ Ժամեր անցնելէ յետոյ խորշանքով կը դիտեն զայն. իրենց համար մեծ բեռ մը կը նկատեն անոր ծնունդը և... կ'ատեն զայն։ Հաւատացէք ինձ, չեն ուզեր պահել, որովհետեւ շատեր հայր չունին և զուրկ են այն պիտոյքներէն որոնց պէտք ունի ծննդաբեր կին մը։

Պահ մը ենթադրենք որ հոգացուի ինչ որ անհրաժեշտ է, բայց անգամ մը որ հիւանդանոցէն մեկնին, այլեւս անտանելի է անոնց վիճակը, որովհետև ոչ մայր ունին և ոչ ալ որ և է մէկը որ զբաղի իրենց պզտիկով։ Ուրեմն ինչպէս չի յուսահատին, երբ կը տեսնեն որ միջոցը կը պակսի իրենց՝ նորածինը խնամելու համար։

Երբ մէկ կողմէ գովելի մտածումով կը փափաքինք և կը քարոզենք որ հայութիւնը բազմանայ, ամուսնութիւնները ստուարանան և ծնունդները հսկայական քայլեր առնեն և միւս կողմէ դժբախտաբար նորանոր զոհեր կուտանք վայրագութեան ու անիծեալ դիւանագիտութեան, ինչո՞ւ սակայն ծնածները պահել չի կարողանանք

Գաւառացի այդ գեղջուկ ու տգէտ, տառապած, նորատի կինը չէ որ պիտի կրնայ գոհացնել հայութեան իրաւացի բաղձանքները, այլ մենք պարտաւոր ենք զանոնք առաջնորդելու։

Հոն ուր նորատի ու տգէտ մայրեր կան և կը տառապին, պզտիկ դասեր տալու է. համոզելու է զանոնք որ համբերատար ըլլալով կուրծք տան մայրական տառապանքներու, ի հարկէ դրապէս ալ օգնելու է որ կարենան անհրաժեշտ եղածը ընել երախայ մը դիեցնելու համար։

Սրտի դառնութեամբ է որ կը գրեմ այս տողերը և անհուն տխրութեամբ կը խորհիմ այն դժբախտ աղջիկներուն վրայ որոնք մայր եղած են և չեն գիտեր թէ ի՛նչ է մայրութեան վսեմ պաշտօնը։ Բայց յանցանքը իրենցը չէ, 13 տարեկանին աշխարհը ճանչցուցեր են իրենց. 15 տարեկանին մայր եղեր և այդ իսկ պատճառաւ (ըստ իրենց) կը տառապին։ Ուրեմն ինչպէ՞ս կ'ուզէք որ սիրեն մայրութիւնը, երբ կը պակսի իրենց մէջ այդ վսեմ զգացումը։ Անկարելի է հաշուել այդ մայրերուն վրայ. որովհետև ինչպէս որ պիտի ծնի այդ դժբախտ էակը այնպէս ալ պիտի մեկնի այս տառապանքի աշխարհէն, առանց օգուտ մը ունենալու իր ազգին. և որովհետև անգամ մը աչքը վախցած է, իր տառապանքին բուն պատճառը այդ տկար էակը նկատած է. այլեւս դժուար պիտի ըլլայ մայր ըլլալ ուզել և պիտի խորշի այդ բանէն, ուրեմն... ահաւասիկ դարձեալ խոշոր հարցում մը, և սակայն ո՞վ պիտի տուժէ, ապահովաբար հայութիւնը։

Ծնունդները շատցնել քարոզելը օգուտ չըներ այլ զանոնք պահել մեծցնելն է ամենակարեւորը։ Ըստ իմ խոնարհ կարծիքիս, պէտք է որ Հ. Կ. Խաչը, Կանանց Ընկերակցութիւնը և ուրիշ այս կարգի միութիւններ միանալով խորհին և մասնաւոր տեղ տալով այդ դժբախտ նորատի կիներուն, սովրեցնեն անոնց մայրական պարտականութիւնը և այսպէսով ես վստահ եմ որ անոնք պիտի սիրեն ի վերջոյ իրենց դժբախտութեան շրջանին մէջ ունեցած այդ զաւակը։

Ունինք մայրական ապաստանարան մը որ լիովին կը կատարէ իր պարտականութիւնը խնամելով իրեն դիմող ծննդաբեր կիներ, բայց եթէ չեմ սխալիր անոնց այդ հոգածութիւնը ժամանակաւոր է. հիւանդանոցէն դուրս ելնելէն վերջն է որ կ'սկըսի անոնց տառապանքը և այս իսկ պատճառով մայրութիւնը ատելը։

Պզտիկ, կենդանի օրինակ մը եթէ կ'ուզէք։

Ասկից երկու ամիս առաջ Գատը գիւղի Կ. Խաչի հիւանդանոցը կը ներկայանայ 15–16 տարեկան նորատի կին մը գիրկը ունենալով 20 օրուան երախայ մը. հակառակ իր աղքատ երեւոյթին և սոսկալի ցաւերուն անդիմադրելի հրապոյր մը կ'ազդէ վրադ. վերջին աստիճան հրապուրիչ. խիստ սեւ, խոշոր գրաւիչ աչքերով միջահասակ դեռատի

**Պատկեր 16. «Հայ կին» 1920 թվական օգոստոս (շարունակությունը՝ հաջորդ էջում)**

9. «Հայ կին» հանդեսի թվայնացված օրինակները հասանելի են Հայաստանի ազգային գրադարանի կայքէջում հետևյալ հղումով՝ http://tert.nla.am/mamul/Hayguine/Table.html



175

մայր մըն է ան. իր վրայ կը մարմնացնէ հրապոյրն ու թշուառութիւնը։

Ստինքը ուռեցք մը ունի. կը ցաւի և կուլայ իր նորածինին հետ. ոչ մէկը ունի բացի ադէտ գաւառացի ամուսինէ մը որ անյարմար է իրեն։

Կարնեցի է ինք. իրենները ամէնքն ալ մեռած են. այդ դժբախտ հայուհին, հռչակաւոր քէօր Հիւսէյին փաշայի զոհերէն մին եղած է. լեռնէ լեռ քաշքշուելէ յետոյ յիշեալ ճիւաղին մարդոց կողմանէ բռնութեամբ անոր ոճրաբոյնը կը տարուի. հոն տարիներով կը տառապի, կուլայ իր սիրելիներուն վրայ և ի վերջոյ հայ գիւղացի երիտասարդի մը ձեռքով խոյս կու տայ ու կը կենակցի հետը. առանց մանրամասնութեանց մէջ մտնելու այս է պատմութիւնը։ Ինքը ուսման ծարաւի, խելացի աղջիկ մըն է, խօսակցութեան մէջ չ'գիտեմ ինչ մը կայ որ կ'ազդէ հոգիիդ։ Բանի վարժուեր է այս կեանքին. կ'ափսոսայ այն օրը որ իբր ամուսին ստիպուեր է առնել մէկը որ իր ճաշակներուն գոհացում չի տար և այժմ ունի երախայ մը որ իրեն ցաւ կը պատճառէ։

Մայրական արուեստին ադէտ և չունենալով մէկը, մեծ մը որ առաջնորդէ զինքը, տեսնելով որ ստինքին մէկը կը ցաւի, չէ ուզեր երախան դիեցնել այդ ցաւած ստինքով, որով բորբոքում յառաջ եկեր է։

Այդ դժբախտ մայրը հիւանդանոցին մէջ վայելեց ամէն խնամք, բայց երբեք չի տեսայ զինքը որ ուրախ ըլլար. միշտ կը մտածէր այն օրուան վրայ ուր պիտի մեկնէր հիւանդանոցէն և զաւկին հետ առանձին պիտի մնար. որով անկնյայտնի զաւկին մահը կը բաղձար. շատ անգամներ կը խրատէի զինքը բայց անօգուտ էր, որովհետեւ առանձին էր մայր չունէր, մէկը չունէր որ օգնէր իրեն և ասկից զատ ոչ մէկ անհրաժեշտ պիտոյք իրեն և զաւկին համար։ Սև օր կը նկատէր այն օրը որ մայրութիւնը պարտադրուեր էր իրեն։

Անկարելի էր տեսնել խեղճ Նազենիկը և չի յուզուիլ, այնքան հրապուրիչ. այնքան գեղեցիկ և փոխանակ իրեն պէս գեղեցիկ զաւկի մը ծնունդ տալու, ընդհակառակը շատ տխեղծ արարած մըն էր տառապանքի պտուղը որ դատապարտուած էր մարելու եթէ չի խնամուէր։

Վերջապէս մեկնեցաւ հիւանդանոցէն կատարելապէս առողջ ինքը և պզտիկն ալ բաւական կազդուրուած։

Մէկ ամիս վերջ օր մը կ'անցնիմ Հայտար Փաշայի տարագրելոց կայանէն և կը փափաքիմ Նազենիկը տեսնել։ Կը գտնեմ զինքը, խնդալով վրաս կը վազէ և ձեռքերս կը բռնէ գոհունակութեամբ. կը նշմարեմ որ պզտիկը գիրկը չէ և չերեւար վրանին մէջ. «ո՞ւր է պզտիկդ» կը հարցնեմ, ուրախ և գոհ դէմքով մը «մեռաւ», կ'ըսէ. կ'ապշիմ ու կը տխրիմ իր այդ աստիճան անտարբերութեան վրայ և կ'ուզեմ երկու խօսք ընել իրեն. կ'ընդմիջէ զիս և «ախ, Տիկին, մի ըսեր, ազատեցաւ, ի՞նչպէս պիտի մեծցնէի. Աստուած մէյ մըն ալ ինծի չի ցուցնէ զաւակ ունենալը» կ'ըսէ։

Տխրութեամբ կը հեռանամ քովէն մտածելով որ բոլոր տառապած և բռնի մայրացածներու հոգեկան վիճակը նոյնն է։ Ցաւալի չէ՞։

ԳՈՀԱՐ Ա. ՄԱՋԼՄԵԱՆ

## ԻՆՔՆ Է...

La vertu vit encore
ANDRÉ CHÉNIER

...Ան քաշքշեց իր երերուն քայլերը, գնա՜ց, գնա՜ց չքացաւ ստուերի մը պէս, ու երեւակայութեանս թելերը դողացին...։

Առաւօտեան անուշ երազը երբ հոգիս կը պարուրէր և դիւթական աշխարհի մը մէջ կը խնկարկէր իմ ամբողջ էութիւնս, ինչո՞ւ կրկին քող մը եկաւ մթագնել այս բոլորը ու ես ափսոսանքով դիտեցի իմ կեանքը. և՛ չեմ գիտեր ինչո՞ւ յանկարծ փափաքեցայ անոնց որոնք նուազ կը զգան ու իրենց տխուր մտածումները վանելու փիլիսոփայութիւնը ունին։

Գարնանային բուրումնաւէտ սիւքը լանթէանայի մը միանուագ ու օրօրուն ձայնը կը բերէր և կը մօտենա՛ր, կը մօտենա՛ր հնչելով ալ աւելի ուժգին ականջներուս և գուցէ սրտիս...։

Ո՞վ էր որ այս ժամուն, դուրսը, տուներուն, գոց վարագոյրներուն և պատուհաններուն հեգնանքի առարկան կը դառնար։

Ո՞վ էր այդ. որ հակառակ իր թարմ տարիքին կը կրէր գլուխ մը դողդոջուն, գլուխ մը որ լանթէանայի եղանակին համեմատ կը շարժէր և իր ժպտուն դէմքը կը ծաղրէր ունայնութիւնը և տառապանքը և կեանքը։

Ու հիմայ ճիշտ պատուհանիս մօտէն կ'անցնի...։ Ո՛հ. ինքն է... ժողովուրդի մը տառապող մէկ զաւակը որ ցորենի հասկի մը նման կ'օրօրուի աջ ու ձախ ու յանկարծ ուղիղ կը բռնէ իրանը գէթ փողոցի փոշիներէն չարհամարուելու համար։

Ինքն է, ցեղիս՝ արեան հեղեղներէն անցնող ու վերապրող մէկ զաւակը որուն կարմրած աչքերը իրենց խո՛րը կը թագնեն զարհուրելի անցեալ մը. բայց հիմայ երջանիկ են անոնք։ Այո՛ ինքն է, կրանիթէ ցեղիս մէկ աննշան բեկորը որ այս նուիրական օրերուն մէջ կը գինովնայ. ինչ փոյթ իրեն տանջանքը փարատելը աւելի սուրբ է ու վշտին դէմ ծառանալը աւելի վսեմ։ Ի՛նչ փոյթ թէ ալքօլը պիտի ճանկռտէ իր ամբողջ մարմինը. թո՛ղ տառապանքը սեղմուի ուժգին և գէթ վայրկեանի մը համար երջանկութիւնը կանգնի իր չողչողուն, դիւրաբեկ և խաբուսիկ պալատին մէջ։

Այդ գինովութիւնը արդար էր և ես ներեցի իրեն, որովհետեւ առաքինութիւնը դեռ կ'ապրէր սրտին մէջ։

Իմ երկար ու մելամաղձոտ նայուածքս քարացաւ՝ մինչդեռ ան քաշքշեց իր երերուն քայլերը. գնա՜ց գնա՜ց, չքացաւ ստուերի մը պէս, ու երեւակայութեանս թելերը դողացին...։

10 մարտ 1920 ՎԻՔԹՈՐԻԱ ՇԱՄԼԵԱՆ

Պատկեր 17. «Հայ կին», 1920 թվական, օգոստոս (սկիզբը՝ նախորդ էջում)


1990

## ԿԱՆԱՑԻ ՔԱՐՈԶՆԵՐ ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԷՆ ՈՄԱՆՑ ՀԱՄԱՐ

Հոգ չէ թէ կանացի քարոզիչ մը նկատուիմ. պիտի գրեմ այս անգամ ալ մեր աղջիկներէն ոմանց դէմ, որոնք ամէն ինչ ծայրայեղութեան կը տանին եւ այս իսկ պատճառաւ ծիծաղելի կը դառնան յաչս ամենուն, եւ մանաւանդ օտարներուն։

Եւրոպականանալ։ Ահա ինչ որ պաշարած է մեր յաւակնոտ կարգ մը օրիորդներու ուղեղը։

Ամէն շարժուձեւ եւ խօսուածք կ'ուզեն եւրոպականացնել եւ դժբախտաբար առանց իւրացուցած ըլլալու եւրոպական ու կենցաղագիտական կանոնները, կը լլրճեն զանոնք։ Սալոնի մը մէջ, արտառոց ձեւեր առնելով ու ինքզինքնուն սալօնի օրիորդի հովեր տալով, կը կարծեն իրենցմով զբաղեցնել ներկաները եւ կ'ընեն ամէն անհեթեթութիւն, պաղութիւն մը առաջ բերելով մթնոլորտին մէջ։

Շոգենաւերուն մէջ այնքան սանձարձակ ու տգեղ վարուելակերպ կ'ունենան որ զարմացկոտ ու հետաքրքիր նայուածքներ կ'ուղղուին իրենց եւ այս բոլորը միշտ յանուն եւրոպականին։ Բայց արդեօք այս ներկայ գրութեամբս կ'ուզեմ մէյ մէկ մամիանե՞ր տեսնել յանձին մեր օրիորդներուն՝ բացարձակապէս ո՛չ։

Մեր աղջիկները գիտնալու են պարեկիրթօրէն խօսիլ եւ հրապուրել։ Այո՛, պէտք է որ օրիորդ մը իրմով զբաղեցնէ թէ իր սեռակիցները եւ թէ իր հակասեռը, բայց դժբախտաբար, բացառութիւններուն յարգանքի բաժին մը տալով, ընդհանրապէս կը պակսի մեր մէջ այդ յատկութիւնը։

Պիտի ուզէի՞ք տեսնել օրիորդ մը կամ տիկին մը որ Թիւնէլի կամ շոգենաւի այնքան պզտիկ ու խճողուած միջավայրի մը մէջ բարձրաձայն ու արտառոց ձեւերով եւ օտար բառեր գործածելով խօսակցութեան մէջ իր շուրջիններուն ծիծաղը շարժէր. այդ պահուն պաղ սարսուռներ չպիտի՞ զգայիք ձեր մարմնոյն վրայ։ Ամէն ազգի մէջ ալ կը գտնուին անպարեկիրթ ու տգէտ անձեր, բայց մեր մէջ կարծես մասնաւոր ճիգ մը կայ ցոյց տալու համար ինչ որ տգեղ է, ինչ որ ծածկել պէտք է։ Քիչ թէ շատ զարգացուածը ամէն բան ներելի կը գտնէ իր անձին համար, անշուշտ տգիտաբար. իսկ խոնարհ դասակարգէն մէկը եթէ չունի երեւալու եւ ինքզինքը ցոյց տալու փափաք, գոնէ յարգելի Լիլաի գրչին նիւթ մատակարարելէ ալ չի քաշուիր եւ այսպէս փոքրամասնութեան մը բարոյապէս գործած չարիքին համար մեծամասնութիւնն է որ կոշտութեան եւ անքաղաքավարութեան բեռը ստիպուած է իր վրայ կրելու։ Եթէ ամէն օր ալ այս նիւթին վրայ գրենք, դարձեալ քիչ է ըսած, որովհետեւ հիմայ այլ եւս ի վիճակի չենք մեր մէջը պարտկելու մեր թերութիւնները. դժբախտաբար աշխարհիս որ կողմը որ կտոր մը հող եւ կաթիլ մը ջուր կը գտնուի, գոնէ մէկ կամ երկու հայեր հոն տեղաւորուիլ կ'ուզեն։

Ցաւալի է որ չեն ուզեր կամ ընդունակ չեն իրենց միջավայրէն ազդուելու եւ քիչ մը կարգի մանելու։ Մենք որ այնքան ուշիմ ենք եւ ամէն բանի յարմարող, ինչո՞ւ արդեօք չենք տեսներ թէ ինչպէս կը վարուին նոր դրացիները։ Չէ՞ք տեսներ որ խոշորացոյցով կը դիտեն մեզի ու մեր շարժումները, ինչո՞ւ գոնէ մեր իգական սեռը իր փափուկ ու կենցաղագէտ վարմունքով հրապուրել չգիտնայ. ինչո՞ւ նոր դրացիները չի խորհին թէ «մե՛զ, որքան ալ ազնիւ ու պարեկիրթ անձեր են սա Հայերը». անխուսափելիօրէն պիտի մտածեն որ «իրա՛ւ, մեղք եղած է իրենց, անմեղ են, բայց բնաւ ճկուն ու քաղաքավար չեն սա երանելի մարդիկը»։

Մէկ սիրուն շարժուձեւ, անոյշ ժպիտ մը եւ քաղաքավար խօսուածք մը հազար թերութիւններ կը գոցէ, եթէ նոյն իսկ ոճրագործ ես, բայց պարեկիրթ խօսուածք ու կեցուա՛ծք ունիս, կը գտնուին անհատներ որոնց համակրութիւնը գրաւես, ինչպէս որ գոնէ վաղանցիկ համակրութիւն մը գրաւեր է աւազակ Մէչէրօքի իր պարեկիրթ ու վայելուչ ձեւերուն համար։

Նամակ մը ստացայ Փարիզէն, ուր ցաւով գրուած էր թէ «երբ Հայերը իրարու քով գան կը մոռնան թէ ուր կը գտնուին եւ Գումգաբուի դուրսը եւ կամ Զարըքճի փողոցը կը դարձնեն գտնուած տեղերնին»։ Արդեօք տեղացի եւ զարգացած Հայերը չե՞ն կարմրիր ի տես իրենց ազգակիցներուն այնքան տգեղութիւններուն, եւ սակայն որո՞ւ ըսել, որո՞ւ խօսք հասկցնել եւ ինչպէս պարեկրթել այդ ցիրուցան խումբերը։

Որքա՛ն հաճելի պիտի ըլլար տեսնել օրիորդներ որոնք մտած են այդ տգէտ խումբերուն մէջ եւ անոյշ ու գրաւիչ խօսքերով կը ջանան համոզել ու պարեկրթել զանոնք, արդեօք պահ մը խորհա՞ծ են մեր եւրոպականանալ ուզող օրիորդները թէ, իրենց այդ անամէջ ձեւերով չէ որ պիտի փայլին, այլ իրական եւրոպականացածները անոնք են որ կը տեսնեն իրենց սեռակից բայց տգէտ քոյրերուն պակասը եւ կը փափաքին ի նպաստ անոնց կրթութեան աշխատիլ։

Անցեալ օր կամուրջին վրայ պզտիկ աղջնակ մը իր մօրը ձեռքէն բռնած կու լար. իր մօտէն անցնող շատ համակրելի ու պարեկիրթ օրիորդ մը ժպտուն ու գրաւիչ ձեւով մը տղուն մօտեցաւ եւ պատուիրեց որ լուռ կենայ ու չի լայ, տղեկը խոկուն լռեց եւ ճամբան շարունակեց. որովհետեւ այդ ըսուածքին ու նայուածքին մէջ այնքան սի-

Պատկեր 18. «Հայ կին», 1925 թվական, մարտ (շարունակությունը՝ հաջորդ էջում)

1991

**ՄՏԱԾՈՒՄՆԵՐ**

Ջարերը ճշմարտութիւնը կ'ատեն. արեւուն լոյսը գողին համար աղէտ մըն է։

**Մ. Կուրթիկեան**

Եթէ մէկը զիս խաբէ, ամօ՛թ իրեն. իսկ եթէ երկրորդ անգամ մըն ալ խաբէ՝ ամօ՛թ ինծի։

**Վ. Հիւկօ**

## → ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ←



ԱՆԱՀԻՏ Յ. ԳԱԼՓԱՔԵԱՆ
Պէյրութ

րում եւ հրապուրիչ բան մը կար որ հմայուեցաւ աղջնակը։

Ա՜հ, ուր էր թէ մեր մէջ ալ շատնային հրապուրիչ ու ճշմարտապէս եւրոպականացած օրիորդները եւ լ'սպաս դնէին իրենց շնորհն ու հրապոյրը ի նպաստ տգէտներու։

Այո՛, [illegible] կը գրեմ։

Ես պիտի նախընտրէի որ գտնուէին նաեւ այր քարոզիչներ, որոնք իրենց սեռակիցներուն թելադրէին որ գոնէ շոգենաւերուն մէջ ու ճամբաներուն վրայ բարեւել, մաքուր հայերէն խօսիլ ու շարժիլ գիտնան, ինչպէս գիտեն բարեկիրթ ու քաղաքակրթուած մարդիկ։

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ պատասխանել Մառ-ցիին որ հաճած էր ինծ հարցում ուղղել Տիկին Հ. Մառքի միջոցաւ։

Սիրելի այրի տիկին, (ա՛հ, ներեցէք) Պ. Մառցի, այս որքան հետաքրքիր էք եղեր. կանացի հետաքրքրութիւն արդարեւ։

Կ'երեւայ թէ ուրբ սիւնակնոց գրութեանս մէջ միայն այդ մասն է որ ձեր ուշադրութեան առարկայ եղած է. բայց սիրելի տիկին կամ պարոն, եթէ քիչ մը աւելի ուշադրութեամբ կարդացած ըլլայիք, պիտի հասկնայիք որ Արմինէի եւ ամերիկահայ պարոնին ճգնաժամային տեսութեան օրը, սուրճ խմելու միջոց չեն ունեցած եւ հետեւաբար ձեր ալ քաշքշուք հետաքրքրութիւնը ի դերեւ ելած է։

ԳՈՀԱՐ Ա. ՄԱԶԼՄԵԱՆ

Պատկեր 19. «Հայ կին», 1925 թվական, մարտ (սկիզբը՝ նախորդ էջում)

# ՀԱՎԵԼՎԱԾ 2.
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ» ԱՄՍԱԳՐԻՑ[10] ՀՈԴՎԱԾՆԵՐ



## ԹԷ ԻՆՉՈՒ ՅԷ ՎՆԱՍԱԿԱՐ ՎԻԺՈՒՄԸ (ԱԲՈՐՏԸ)

Շատերը կարծում են, թէ վիժումն անվնաս մի գործ է: Ճի՞շտ է արդյոք դա և կարո՞ղ ենք արդյոք առանց մեր վնասելու, վորքան կամենանք վիժում (աբորտ) կատարել:

Ի հարկէ ո՛չ:

Յերեխա բերելը կնոջ համար անհրաժեշտ և բնական մի յերեվույթ է: Մենք գիտենք, թէ ինչ տարբերություն կա ամուսնացած յերեխա բերող և չբերող կնոջ մէջ: Յերեխա բերող և շատ յերեխաներ ունեցող կինը իր համապատասխանությունը միշտ պահպանած փարթամ և նորմալ է լինում, մինչդեռ չբեր կինը (անծինը)՝ չորանում, ջղային և ինչպես ասում են՝ «տանը մնացած» մի էակ է: Այդ հանգամանքը սեռական օրգանների գործունեության հետեվանք է: Բնական գործունեությունը տալիս է առողջ մայր, իսկ պահպանվածը՝ միշտ տխուր տեսք, միշտ անքուն, ու վողորմելի յէ լինում, վորից փախչում են թէ ամուսինը և թէ շրջապատը: Սեռական օրգանները բնականորեն են աշխատում. յերբ ձվարանը արտադրում է ձվիկներ, այդ ձվիկները բեղմնավորվում են և սկսվում է բնական հղիությունը: Արգանդն իր հերթին պատրաստարար ամիսը մեկ անգամ դաշտանից առաջ պատրաստվում է ընդունել բեղմնավորված ձվիկը, վորպեսզի ապահովի զարգացող պտուղը: Հղիությունը առաջ է բերում վոչ միայն սեռական օրգաններին, այլև ամբողջ մարմնի մասերի մի նոր փոխհարաբերություն, նոր ազդեցություն մի գործարանից դեպի մյուսը, վորով ամբողջ մարմնի այդ գրությունը դառնում է բնորոշ հատկանիշ հղիության համար և արտահայտվում է բոլորիս հայտնի դասավոր յերեվույթներով, ինչպես են օրինակ՝ սրտի խառնելը, փսխումը, ճաշակի փոփոխումը, տրամադրության ընկնելը, զզվանք դեպի սեռական հարաբերությունները և այլն և այլն:

Կնոջ օրգանիզմի մէջ ամրացած այդ բեղմնավորված ձվիկը՝ ունենալով այդպիսի սերտ կապ մոր ամբողջ օրգանիզմի հետ, կազմում է մոր մի մասը, վորը ընկերքի միջոցով իր սնունդը ծծում է մոր արյունից և արագ կերպով աճում:

Հիմա տեսնենք ի՞նչ է կատարվում վիժման (աբորտի) դեպքում:

Վիժումը լինում է յերկու տեսակ.—առաջին դեպքում յերբ վիժումը՝ տեղի յէ ունենում զանազան հիվանդությունների հետեվանքով, իսկ յերկրորդ դեպքում, յերբ կատարվում է արհեստական ձևով:

Առաջին դեպքում վիժումները սովորաբար առաջ են գալիս զանազան հիվանդությունների պատճառով, վոր տեղի յէ ունենում կնոջ համար միանգամայն անսպասելի կերպով: Նկատվել է, վոր այդպիսի կանայք մեծ ցանկություն են ունենում բժշկվելու, վորպեսզի կարողանան նորմալ հղություն ունենալ և ծնեն առողջ յերեխա:

Բայց մեզ հետաքրքրող հարցը արհեստական վիժումն ու նրանից առաջացած վնասակարություններն է, վորի վրա և ուզում ենք կանգ առնել:

Ավելի հաճախ արհեստական վիժում են կատարում մի քանի յերեխա ունեցող մայրերը, ուրեմն առողջ կանայք: Առողջ մայրերի համար հղությունը բնական առողջ յերեվույթ է և ձուն այնքան ամուր և սերտ կապված է արգանդի հետ, վոր վոչ թռիչքները (թռչկոտելը) և վոչ էլ խինինի թունավոր դեղերը չեն կարողանում վիժում առաջացնել: Հղի կնոջ մարմինը աշխատում է պահպանել իր բոլոր մասերի

Պատկեր 20. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր
(շարունակությունը՝ հաջորդ էջում)

10. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի թվայնացված օրինակները հասանելի են Հայաստանի ազգային գրադարանի կայքէջում հետևյալ հղումով՝ http://tert.nla.am/mamul/Hayastaniashxatavoruhi/Table.html


26 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ № 3 (38)

հավասարակշռությունը և քանի որ նա հղի յե, համապատասխան կերպով բնականորված տանում է իր աշխատանքը:

Բայց հենց որ վիժեցնողի ձեռքը միջամտում, քայքայում է այդ հղությունը, այսինքն կատարում է վիժում, առաջանում է մի այնպիսի դրություն, որ կնոջ ամբողջ մարմինը նմանվում է առանց ազունի աշխատող մի ջրաղացի: Ուրեմն պարզ է թե այդպես պտտվող ջրաղացին ինչ է սպառնում:

Միանգամայն պարզ է, որ կինը վիժում անելով, պետք է քայքայի իր ամբողջ կազմվածքը, իսկ թե ինչ է կատարվում անմիջապես արգանդում և արգանդի շուրջը, դա էլ կախված է նրանից, թե ինչ ձևով են անում վիժում կատարել: Վիժման բազմաթիվ և զանազան ձևերից-չարիքներից,-արգանդի քերելը համարվում է նվազագույն չարիքը, որա համար է, որ օրենսդրությունը ճանաչում է միայն վիժման այդ ոպերացիան, այսինքն արգանդի քերելը, միայն այն պայմանով, որ այդ ոպերացիան կատարվի բժշկի ձեռքով ու համապատասխան պայմաններում: Բայց և այնպես այդ նվազագույն չարիքն էլ (արգանդի քերելն էլ) առաջ է բերում մի շարք բարդություններ:

Առաջինը.—զանազան վերքեր և արգանդի պատռվածքներ: Փափուկ և նուրբ հղի արգանդը քերելիս՝ մեր սովորական կոպիտ մետաղյա գործիքներով, շատ հեշտ կարելի յե ծակել կամ պատռել արգանդի պատերը: Պատռած տեղով բժիշկը կարող է դուրս քաշել և նույնիսկ կտրրել մոր աղիքը (կարծելով թե դա պտղի պորտալարն է): Այդպիսի դեպքեր շատ են նկարագրված բժշկական գրականության մեջ:

Երկրորդը.—նկատված է, որ մի քանի անգամ վիժում կատարած կինը ավելի հաճախ և յենթարկվում հետագա ծննդաբերությունների ժամանակ զանազան բարդությունների՝ արյունահոսությունների, արգանդի պատերի ձեղքերի, զանազան ոպերացիաների անհրաժեշտությունների և այլն և այլն:

Յերրորդ և ամենավտանգավոր բարդությունը այն է, որ վիժում կատարող կինը կարող է վարակում ստանալ:

Յուրաքանչյուր վերքը կարող է վարակվել և ապա արյան միջոցով վարակել ամբողջ մարմինը: Իսկ քանի որ քերելուց հետո արգանդի խոռոչը մի մեծ վերք է, մի վերք, որը շնորհիվ իր դիրքի շատ հեշտ կարող է վարակվել, պարզ է, որ վտանգը չափազանց մեծ է: Վարակման հետևանքը կարող է լինել—սկսած զանազան տեղային բորբոքումներից և փոփոխումներից, թե արգանդի և թե մյուս մասերի (ձվարանների) մեջ, իսկ արյան վարակումը կարող է նույնիսկ մինչև մահվան հասցնել: Յեթե կինը չմեռավ, նա ընդմիշտ մնում է հաշմանդամ և անզավակ:

Անգամ յեթե վիժումը կատարվի մաքրության տեսակետից ամենաբարեխիղճ կերպով պատրաստված ոպերացիոն սրահում, այնուամենայնիվ չի կարելի վստահ լինել, որ կինը չի վարակվի: Պատճառն այն է, որ կնոջ թե հեշտոցը և թե արգանդի պարանոցը միշտ հարուստ են զանազան միկրոբներով և ուրեմն վարակման վտանգը միշտ ներկա յե:

Այսպես ուրեմն, վիժումը, լինի նա կատարած ամենալավ պայմաններում և ամենահմուտ բժշկի ձեռքով, այնուամենայնիվ կնոջ համար վտանգավոր է իր բազմաթիվ բարդություններով ու նույնիսկ մահով:

Բժ. Գ. ԱՐԵՇՅԱՆ

Պատկեր 21. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր
(սկիզբը՝ նախորդ էջում)



# ՏԱՏՄԵՐԸ

(Փոքրիկ պատմվածք)

—Ու՜-ու՜ֆ, ծխաթաթախ աչքերով մի հոգոց քաշեց Սոնան ու իր տան նեղ ու ցածլիկ դռնակը բացեց, դուրս յեկավ։

Դուրսը, պատի տակ, նստել եր նրա կեսուրը՝ Նաբաթը, և իր վոսկրացած ու կռացած մեջքը դեմ եր տվել արևին։

Սոնան մոտեցավ կեսրոջ, նստեց մի փոքր քարի վրա. արևի տակ կարծես ավելի լավ եր մտածել—վորոշումներ անել։

Սոնան վեց յերեխա ուներ, դժվար եր կար անելով նրանց կառավարել, ուտացնել, մեծացնել։

Մարդն էլ ես ա մի տարի յե քաղաք և գնացել՝ աշխատանք անելու։

—Գիտե՞ս ինչ, ազի,—հանկարծ սկսեց Սոնան, դառնալով կեսրոջ կողմը—յես ել չեմ ուզում յերեխա ունենալ. ի՞նչ անեմ, վոր չբերեմ։

—Չգիտե՞ս վոր. գնա Շորոր տատմերի մոտ, նա մի ճար կանի, կազատվես.—Թեթև-թեթև խոսեց Նուբարը և իր վոսկրացած ձեռներով հավաքեց ճակատի վրա թափված մազերի փոքրիկ գուլերը։

Մյուս որը Սոնան գնաց տատմոր տունը։

Տատմերը սիրով ընդունեց Սոնային, խոստացավ անփորձ ազատել նրան։

Յերկանքի քարը պատառցրեց Սոնայի փորի վրա և իրիկնադեմին ճամբի դրեց։

Անցան որեր... Սոնան ծնեց մի մեռած յերեխա և նրանից հետո ել անկողնից վեր չկացավ։

Նրա դեմքը որեցոր դեղնում եր, կարմրագույն այտերի տեղ դուրս եյին ցցվում վոսկրները, իսկ կամար ու սև ունքերի տակ նրա կապույտ աչքերը փոքրանում եյին և ցածրանում։

Սոնան սուս եր. ցավագին մեկ-մեկ տնքում եր ու հառաչում։

—Ա՜խ տատմերը...

Ել ուշ եր։

Սոնան մեռավ... Նրա յերեխաները լալիս եյին դառն վըշտով, իսկ պառավ Նուբարը ծնկներին եր ծեծում, դանդաղ, անուժ ու կցկտուր լալիս...

Դրկիցները թափվել եյին «տատմոր» գլխին, մեղադրում եյին նրան, վոր լավ «ուստա» չի։

Տատմերը պատասխանում եր։

—Սոնան հին ցավ ուներ, հին...

Նոր-Բայազետ

ՌԱՄԱ

---

Ընկեր գեղջկուհիներ և պատգամավորուհիներ, մեր թղթակցի վերևում պատմած իրողությունը մի դեպք չի. այս տեսակ բաներ շատ են պատահում մեր գյուղերում։ Պատգամավորուհին առաջինն և գեղջկուհիներից, վոր պետք և կռվի տատմերների դեմ, բացատրի հետևանքը կանանց՝ նրանց տված պատուհասը։

Խմբագրություն

Պատկեր 22. «Հայաստանի աշխատավորուհի», 1926 թվական, նոյեմբեր



# ՀԱԼԱԾԵՆՔ ՀԻՆ ԿԵՆՑԱՂԸ

## ԱԶԱՏԵԼ ՏԱՏՄԵՐՆԵՐԻ «ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԻՑ»

Բարանայի շրջանի մի շարք գյուղեր օգտվում են Կողբ գյուղի հիվանդանոցից, սակայն հիվանդանոցում սուր կերպով զգացվում է մանկաբարձուհիների պակաս. այդ հանգամանքից օգտվելով դըլուխ են բարձրացրել տատմերները: Վերջերս տատմերի զոհ դարձան հղի կանանցից՝ Ցեսայանը, Ալադյանն ու Բարսեղյանը, վորոնք մահացան տատմերի դանակի տակ.

Այս բոլորի համար պատասխանատուն գյուղխորհուրդը, վորը կարծես բոլորովին ուշադրություն չի դարձնում կենցաղային դժբախտ յերևույթների վրա:

Ժամանակն է, վորպեսզի գեղջկուհին ազատվի տատմերների «բժշկությունից»։

ԼՈՌԵՆՑ

Պատկեր 23. «Հայաստանի աշխատավորուհի», 1930 թվական, հունիս



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Բժ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ԲԺՇԿԻ ԶՐՈՒՅՑԸ ԱԲՈՐՏԻ ՄԱՍԻՆ

30

Պատկեր 24. «Հայաստանի աշխատավորուհի», 1932 թվական, հոկտեմբեր-նոյեմբեր (շարունակությունը՝ հաջորդ էջում)


բարդ են և կոչվում են զավակատուն: Զավակատան միջոցով անող պտուղը մոր մարմնից քաշում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է— իր աճման ու զարգացման համար:

Մեզ մոտ աբորտը (արհեստական վիժումը) թույլատրված է: Դրա համար լինում են կամ սոցիալական պատճառներ (ընտանեկան պայմաններ, բազմաթիվ յերեխաներ) կամ առողջության վիճակը չի ներում յերեխա ծնել (նեղ կոնք, տուբերկուլյոզ, սրտի և այլ հիվանդություններ):

Սակայն պետք է ասել վոր մինչև հիմա էլ, հետամնաց գյուղերում, կան բազմաթիվ պառավներ, տատմերներ, վորոնք հատկապես աբորտ անելով են զբաղված: Փոխանակ հիվանդանոց գնալու, կան կանայք, վորոնք գնում են այդ պառավների մոտ, վորոնք իրենց կեղտոտ ձեռքերով ու ժանգոտ գործիքներով քերում են կնոջ որգանները, առաջացնում արյունահոսություն:

Չպետք է կարծել, թե աբորտը չնչին և անվտանգ գործ է: Ամեն տարի հազարավոր կանայք զոհվում են, հաշմանդամ են դառնում աբորտից: Նույնիսկ ամենափորձված բժշկի մոտ լինում են անհաջող դեպքեր, յերբ նա փոխանակ ողնելու, վնասում է կնոջը: Վիժում կատարելու համար անհրաժեշտ է լինում արգանդի մեջ մտցնել հատուկ գործիքներ և քերել այնտեղ յեղած պտուղը: Ինչ է կատարվում արգանդի մեջ— չի յերևում. աշխատանքը կատարվում է մթության մեջ և դարմանալի չի լինի, յեթե այդ գործիքը քերի արգանդի պատը կամ նույնիսկ հանի աղիքեն: Դա շատ վտանգավոր բարդություն է: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է լինում անմիջապես վիրահատել, (փորը) ճղել ու կարկել պատռված տեղերը:

Առանձնապես վտանգավոր է վիժում կատարել այն ժամանակ, յերբ հղիության 3 ամիսն անցել է: Այդպիսի դեպքերում շատ հաճախ արգանդը վնասվում է: Անփորձ մարդը այլանդակում է կնոջ որգանները և կեղտ ու վարակ է մտցնում նրանց մեջ, վորից հաճախ ազատվել չի լինում: Յեթե նույնիսկ տատմերը կարողանում է վիժում կատարել, այնուամենայնիվ պտուղի մի կտորը մնում է արգանդում, վորը հետո սկսում է նեխել և թույլ չի տալիս, վոր վիրավորված արգանդը առողջանա, սկսվում է արյունահոսություն: Շատ հաճախ էլ այդպիսի գաղտնի վիժումը վերջանում է մահով:

Քիչ չի պատահում, վոր կանայք դիմում են ուրիշ միջոցների ընդունում են խինին, արգանդի մեջ են մտցնում զանազան բույսեր, վորոնք վնաս են առաջացնում և այլն:

Այդպիսի բաներ անելուց առաջ մի լավ ու խոր պետք է մտածել. արժե արդյոք այդպիսի քայլ անել և վտանգի յենթարկել կյանքը: Հղիության 2½ ամիսն անցնելուց հետո վոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, վոր վիժում կատարեն: Դրանից կարելի յե գերեզման իջնել: Իսկ յեթե կինը վորոշում է անպայման աբորտ անել, պետք է գնա բժշկի մոտ, հիվանդանոց:

Հիվանդանոցից դուրս աբորտ անել— նշանակում է վտանգի տակ դնել իր կյանքը: Պետք է ամեն կերպ խուսափել տատմերների զանազան խորհուրդներից, վորոնք ավելի շատ են մահ բերում քան դանակը:

Հետևյալ անգամ կխոսենք հակաբեղմնավորման միջոցների ու նրանց նշանակության մասին:

Պատկեր 25. «Հայաստանի աշխատավորուհի», 1932 թվական, հոկտեմբեր-նոյեմբեր (սկիզբը՝ նախորդ էջում)



# ԱԲՈՐՏՆ ՈՒ ՆՐԱ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Աղոտ պատկերացումն աբորտի և նրա վտանգների մասին մինչև օրս շատ հաճախակի երևույթ է։ Շատերն արհեստական աբորտի՝ հղիության ընդհատման վրա՝ շատ թեթև են նայում և համարում են հասարակ օպերացիա, սակայն նման տեսակետը, որը դժբախտաբար տարածված է աշխատավորության լայն խավերի մեջ, խորապես սխալ է և հաճախ հղի է ծանր հետևանքներով։

Արհեստական աբորտը հասարակ օպերացիա չէ։ Նույնիսկ փորձված մասնագետ բժշկի ձեռքին կարող են առաջանալ վտանգներ, էլ չեմ խոսում այն մարդկանց մասին, որոնք բոլորովին փորձ և գիտություն չունեն։

Աբորտի վտանգն առանձնապես մեծ է այն դեպքերում, երբ այս կամ այն պատճառներով կանայք դիմում են ալեւո դայակների և տատմերների օգնության։ Բժշկական մաքրության մասին գաղափար չունենալով, նրանք այնպիսի պայմաններում, որը չի համապատասխանում վիրաբուժական միջամտության համար, անմաքուր ձեռքերով նրանք կեղտոտ գործիքները մտցնում են կնոջ արգանդի խոռոչը, որով առաջ են բերում արյան վարակում։

Ծանր բարդություններից մեկը, որ հանդիպում է ընդհատակյա աբորտի դեպքում և վերջանում է մահով, հանդիպում է նաև արգանդի ծակվածքը, որն առաջանում է արգանդի մեջ զանազան գործիքներ մտցնելու հետևանքով և այդ ծակից դուրս են թափվում փորոտիքն ու որովայնի այլ օրգաններ։ Արգանդի նման վնասվածքի հնարավորությունը մեծանում է նաև նրանով, որ հղի արգանդն արյունատար լինելով, ավելի հյութալի և փափուկ լինելով, ավելի հեշտությամբ կարող է ծակվել, քան ոչ հղի արգանդը։

Բայց համապատասխան հիվանդանոցային պայմաններում մասնագետ բժշկի կատարած արգանդի քերման օպերացիան արդյոք կարո՞ղ է կնոջ ապահովել վտանգից։ Ի հարկե, ոչ։ Այդ օպերացիան, անկասկած անվտանգ օպերացիա չէ, նույնիսկ չափազանց փորձված բժշկի համար։ Ինչպես այդ օպերացիան կատարելու ընթացքում, այնպես էլ նրանից հետո, նկատվում են խիստ վտանգավոր բարդություններ, մինչև իսկ արգանդի ծակվածք, որոնք ոչ միայն ծանր հիվանդությունների պատճառ են դառնում, այլ և՝ կնոջ մահվան։ Արգանդի ծակվածքի դեպքում վտանգը ոչ միայն այն է, որ վնասվում են արգանդի իրեն պատերը և արյունահոսություն է առաջանում, այլ գլխավորապես առաջանում է աղիքների վերք և հետագայում՝ որովայնամզի բորբոքում, որը հաճախ դժբախտ կնոջ մահվան պատճառ է դառնում։

Բացի որովայնամզի բորբոքումից, վտանգավոր բարդություն է հանդիսանում վարակումը, որը հաճախ առաջանում է նույնիսկ անբասիր վիրաբուժական պայմաններում և կարող է լինել կամ տեղական վարակում, որը վնասում է կնոջ սեռական օրգանները կամ ընդհանուր վարակում, երբ վարակը թափանցում է արյան մեջ և տարածվում ամբողջ մարմնով։ Վերջին դեպքում զարգանում է մի ծանր հիվանդություն, որի բուժման մեջ մինչև օրս մեծ հաջողությունների չենք հասել։

Պատրաստվելով օպերացիայի, բժիշկը ոչ միշտ համոզված է, թե կարող է հեռացնել վարակը, որն առաջուց արդեն կա սեռական սֆերայում։ Կնոջ սեռական օրգանները, մանավանդ արտաքին սեռական օրգանները մաքուր չեն։ Նրանց վրա այս կամ այն չափով միշտ էլ վարակ կա, որ կոչվում են բակտերիաներ։ Քանի դեռ վերքեր չկան, այդ բակտերիաները իրենց համար խաղաղ ապրում են և կնոջը ոչ մի վնաս չեն հասցնում։ Արգանդը քերելու ժամանակ առաջացվում են վերքեր արգանդի պարանոցին և արգանդի ներքին մակերեսի վրա և, հետևաբար, վարակը կարող

Պատկեր 26. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, ապրիլ
(շարունակությունը՝ հաջորդ էջում)




Պատկեր 27. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, ապրիլ (սկիզբը՝ նախորդ էջում)



նադրությունը մեր մեծագույն նվաճումների արդյունքն է, դրան հասանք մենք այն պատճառով, վոր մենք ունեցանք խորհրդային իշխանություն, և վերջինիս լավ պաշտպանեցինք, վոր մեզ ղեկավարում եր փառապանծ կոմունիստական կուսակցությունը։

— Մենք այս օրին հասանք այն պատճառով, վոր լավ աշխատեցինք, և սովորեցինք՝ Մարքսից, Էնգելսից, ԼԵՆԻՆԻՑ և մեզ հետ ապրող բոլոր դժվարին պայքարներում մեզ ղեկավարող, հեղափոխության մարտերի մեծագույն վարպետ ՍՏԱԼԻՆԻՑ։ Խորհրդային ամեն մի քաղաքացու սիրտը լցուն է շնորհակալության բուռն զգացմունքով հանդեպ ժողովուրդների մեծ առաջնորդ հարազատ ՍՏԱԼԻՆԸ։ Այն, ինչ ասում է Ստալինը, դա կատարվում է։ Իմաստության, ուժի և ճշմարտության գեղեցիկ օրինակն է մեր առաջնորդը։ Պատմության մեջ, ո՞վ է յեղել բազմամիլիոն մարդկանց սրտերը դյութող, այդ սրտերը գերող, մարդկանց բոլոր ուժերը միացնող մեծ մարդը՝ քան ՍՏԱԼԻՆԸ։ Մենք նրան կասենք. դու բոլոր փորձություններից մեզ հաղթող դուրս բերիր, մենք պատրաստ ենք կատարել այն բոլորը, ինչ վոր դու կասես, մենք գիտենք, վոր քո ցույց տված ուղին միակ ճշմարիտ ուղին է, Մարքսի, Լենինի ուղին է։ Դե ուրեմն, մենք պատրաստվել ենք, Մեծ Հրամանատար, ասա և մենք կատարենք։

— Ընկերներ ամեն մի մարդ իր սրտի խորքում ծով զգացումներից ամենագեղեցիկ զգացման համար ունի պահած մի անկյուն։ Ցես կարող եմ վստահ կերպով ասել, վոր բազմամիլիոն մարդկանց սրտերում, գեղեցիկ զգացման համար պահած անկյունում տիրաբար բազմած է ժողովուրդների մեծ առաջնորդ ՍՏԱԼԻՆԸ։

Աշխույժ ծերունին վոգեվորության բուռն զգացմունքով իջնում է ամբիոնից։

ԱՌ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

# ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԱԲՈՐՏՆԵՐՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ, ԾՆՆԴԱԿԱՆՆԵՐԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ԲԱԶՄԱՆԴԱՄ ԸՆՏԱՆԻՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԾՆՆԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՑԱՆՑԸ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ, ԱԼԻՄԵՆՏ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՐԵՅԱԿԱՆ ՊԱՏԻԺՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻ ՔԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, վորն սկիզբ դրեց ամեն տեսակ դասակարգային շահագործման վոչնչացման, հենց իրենց՝ դասակարգերի վոչնչացման, միաժամանակ սկիզբ դրեց նաև կանանց լիակատար ու վերջնական ազատագրման։

Աշխարհի վոչ մի յերկրում կինն այնպիսի լիակատար իրավահավասարություն չի վայելում քաղաքական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և ընտանեկան կենցաղում, ինչպես ԽՍՀՄ-ում։

Աշխարհի վոչ մի յերկրում կինը, վորպես մայր ու քաղաքացի, վորի վրա մեծ ու պատասխանատու պարտականություն է ընկնում՝ ծնելու և դաստիարակելու քաղաքացիներ, այնպիսի հարգանք և որենքի պաշտպանություն չի վայելում, ինչպես ԽՍՀ Միության մեջ։

Սակայն յերկրի տնտեսական քայքայումը, վորը վրա հասավ քաղաքացիական պատերազմից և զինված ինտերվենցիայից հետո առաջին տարիներին, և կանանց կուլտուրական անբավարար մակարդակը, վորը ժառանգություն եր մնացել մինչհեղափոխական եպոխայից, հնարավորություն չտվին կանանց իսկույն և յեթ լիակատար չափով ոգտագործելու որենքի տված իրավունքները և առանց ապագայից յերկյուղ կրելու կատարելու իրենց պարտականությունները՝ վորպես քաղաքացի ու մայր, վորը պատասխանատու յե իր յերեխաների ծննդի ու նախնական դաստիարակության համար։ Այդ հիման վրա խորհրդային իշխանությունը 1920 թվի նոյեմբերի 18-ին թույլ տվեց կանանց աբորտ կատարել (հղիության արհեստական ընդհատում) առայժմ, քանի դեռ, ինչպես գրել եյին Առողջապահության ժողովրդական կոմիսարիատը և Արդարադատության ժողովրդական կոմիսարիատն «անցյալի բարոյական մնացուկները և ներկայիս տնտեսական ծանր պայմանները հարկադրում են կանանց մի մասին դիմելու այդ օպերացիային» («Որենքների ժողովածու», № 90, եջ՝ 471)։

Լենինը դեռ 1913 թվականին գրում եր, վոր գիտակից բանվորներն «անպայման թշնամի յեն նոր մալթուսականությանը, մի հոսանք, քաղցած և ինքնասեր քաղքենիական զույգին հատուկ, վորը վախեցած փնթփնթում է՝ «աստծով մի կերպ պահենք մեր գլուխը, իսկ յերեխա ավելի լավ է չլինի»։

Սակայն Լենինը, ըմբոստանալով աբորտի՝ վորպես սոցիալական չարիքի դեմ, նրա դեմ պայքարելու համար բացահայտորեն անբավարար եր համարում միայն աբորտն արգելող որենքները։ Դեռ ավելին՝ նա մատնանշում եր, վոր կապիտալիզմի պայմաններում այդ որենքները միայն արտացոլում են «տիրապետող դասակարգերի կեղծավորությունը», վորովհետև դրանք «չեն բուժում կապիտալիզմի հիվանդությունները, այլ առանձնապես չարորակ, առանձնապես ծանր են դարձնում այդ հիվանդությունները կեղեքվող մասսաների համար» (հատոր 16, եջ՝ 498—499)։

Միմիայն սոցիալիզմի պայմաններում, վորտեղ բացակայում է մարդու շահագործումը մարդու կողմից և վորտեղ կինը հանդիսանում է հասարակության լիիրավ անդամը, իսկ աշխատավորների նյութական բարորության հարաճուն բարձրացումը հասարակական զարգացման

3

Պատկեր 28. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 3



որենք է— միայն այդպես կարելի է լուրջ հիմքի վրա դնել աբորտի դեմ մղվող պայքարը, այդ թվում՝ նաև արգելիչ որենքների միջոցով:

Կապիտալիստական շահագործման վոչնչացումը ԽՍՀՄ-ում, աշխատավորների նյութական բարեկեցության աճումը և քաղաքական ու կուլտուրական մակարդակի հսկայական չափով բարձրանալը — հնարավորություն են տալիս արծարծել Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի 1920 թ. նոյեմբերի 18-ի վորոշումը վերանայելու հարցը:

Մի կողմից՝ կանանց ու յերեխաների անհրաժեշտ նյութական ապահովումը, բազմանդամ ընտանիքներին պետական ոգնություն ցույց տալը, ծննդարանների, մանկամսուրների ու մանկապարտեզների ցանցի առավելագույն զարգացումը, որենսդրական կարգով այն նվազագույն գումարի սահմանումը, վորը պարտավոր է վճարել հայրն իր յերեխայի պահպանման համար՝ ամուսինների անջատ ապրելու դեպքում, մյուս կողմից՝ աբորտների արգելումը՝ միաժամանակ ուժեղացնելով պատիժը յերեխաների պահպանման նպատակով դատարանի սահմանած միջոցները չարամտորեն չվճարելու նկատմամբ և ապահարզանների որենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելը՝ ընտանիքին ու ընտանեկան պարտականություններին թեթևամիտ վերաբերմունք ցուցաբերելու դեմ պայքարելու նպատակով—ահա այն ուղիները, վորոնցով պետք է ընթանալ ամբողջ ազգաբնակչությանը վերաբերող այդ մեծ հարցը լուծելու համար: Այդ տեսակետից խորհրդային կառավարությունն ընդառաջում է աշխատավոր կանանց բազմաթիվ դիմումներին:

Վերոհիշյալի հիման վրա և հաշվի առնելով նախագծի քննարկման ընթացքում քաղաքացիների արած մի քանի դիտողությունները, ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը և Ժողկոմխորհը վորոշում են՝

**1.**

**ԱԲՈՐՏՆԵՐՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Նկատի ունենալով աբորտի վնասակարության ապացուցված լինելը, արգելել աբորտ կատարել թե՛ հիվանդանոցներում ու հատուկ բուժական հաստատություններում և թե՛ տանը՝ բժիշկների մոտ ու հղի կանանց մասնավոր բնակարաններում: Աբորտ կատարելը թույլ տալ բացառապես այն դեպքերում, յերբ հղիության շարունակությունը վտանգ է սպառնում հղի կնոջ կյանքին կամ ծանր վնաս է նրա առողջությանը, ինչպես նաև ծնողների ժառանգաբար անցնող ծանր հիվանդությունների դեպքում, այն էլ միայն հիվանդանոցների ու ծննդարանների պայմաններում:

2. Հիվանդանոցներից դուրս կամ հիվանդանոցում, բայց վերոհիշյալ պայմանները խախտելով աբորտ կատարելու համար քրեական պատիժ նշանակել — աբորտ կատարող բժշկին՝ մի տարուց մինչև յերկու տարի բանտարկություն, իսկ հակասանիտարական պայմաններում կամ հատուկ բժշկական կրթություն չունեցող անձանց կողմից աբորտ կատարելու համար քրեական պատիժ նշանակել առնվազն յերեք տարի բանտարկություն:

3. Կնոջն աբորտի դրդելու համար քրեական պատիժ նշանակել մինչև յերկու տարի բանտարկություն:

4. Վերոհիշյալ արգելքը խախտելով աբորտ կատարող հղի կանանց համար վորպես քրեական պատիժ սահմանել հասարակական պարսավանք, իսկ աբորտն արգելելու որենքը կրկին խախտելու դեպքում՝ տուգանք մինչև 300 ռուբլի:

**2.**

**ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

5. Սոցիալական ապահովագրության որգաններում ապահովագրված թե՛ բանվոր և թե՛ ծառայող ծննդկանների նյութական դրությունը բարելավելու նպատակով, այն նպաստի չափը, վորը տրվում է պետական սոցիալական ապահովագրության միջոցներից՝ նորածինների խնամքի անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու համար, 32 ռուբլուց հասցնել 45 ռուբլու:

6. Ամսական 5 ռուբլուց մինչև 10 ռուբլու հասցնել այն նպաստի չափը, վորը տրվում է մորը՝ յերեխային կերակրելու համար:

7. Կոոպերատիվ արտելների ու ձեռնարկությունների անդամ՝ չապահովագրված աշխատավոր կանանց համար սահմանել, վոր վերոհիշյալ նպաստները պետք է տան փոխադարձ ոգնության կոոպերատիվ գանձարկղները՝ նույն հիմունքներով:

8. Վերացնել այն սահմանափակումը, վորն Աշխատանքի Որենսգրքով սահմանված է ծառայող կանանց վերաբերմամբ (հոդված 132), հավասարեցնելով նրանց բանվորուհիներին՝ ծննդաբերությունից առաջ և հետո տրվող արձակուրդի տևողությամբ (56 որ ծննդաբերությունից առաջ և 56 որ ծննդաբերությունից հետո):

9. Քրեական պատիժ սահմանել հղիության պատճառով կանանց աշխատանքի ընդունելուց հրաժարվելու համար, նույն պատճառներով նրանց աշխատավարձը նվազեցնելու համար, որենքում նախատեսելով, վոր պարտադիր է պահպանել հղի կնոջ նախկին աշխատավարձը, միաժամանակ փոխադրելով նրան ավելի թեթև աշխատանքի, յելնելով վերջին վեց ամսվա աշխատավարձից:

10. Պետական նպաստ սահմանել բազմանդամ ընտանիք՝ 6 յերեխա ունեցող մայրերին՝ յուրաքանչյուր հաջորդ յերեխան ծնելիս տարեկան 2000 ռուբլի՝ յերեխան ծնվելուց հետո 5 տարվա ընթացքում, իսկ 10 յերեխա ունեցող մայրերին՝ 5000 ռուբլի պետական միանվագ նպաստ՝ յուրաքանչյուր հաջորդ յերեխան ծնվելիս և յերկրորդ տարվանից սկսած՝ 3000 ռուբլի տարեկան նպաստ, վորը վճարվում է հաջորդ չորս տարիների ընթացքում յերեխան ծնվելու որից, տարածելով որենքի այս հոդվածը նաև այն ընտանիքների վրա, վորոնք այս որենքը հրատարակվելու մոմենտին ունեն համապատասխան թվով յերեխաներ:

**3.**

**ԾՆՆԴԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑՆ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հանձնարարել դաշնակից հանրապետությունների առողջապահության ժողկոմատներին՝

11. Քաղաքներում, արդյունաբերական ու շրջանային կենտրոններում ապրող ծննդկաններին հատուկ ծննդարաններում ծննդաբերական ոգնությամբ լիակատար կերպով ընդգրկելու նպատակով, մինչև 1939 թվականի հունվարի 1-ը կառուցել և շահագործման հանձնել նոր ծննդարաններ՝ 11.000 մահճակալով, դրանցից՝

1936 թվականին, վորպես լրացում 1936 թվականի պլանով նախադծված 4.200 մահճակալի— 2000 մահճակալ:

1937 թ.— 4.000 մահճակալ;

1938 թ.— 5.000 մահճակալ:

12. Գյուղական վայրերում ծննդկաններին ցույց տրվող ստացիոնար ծննդաբերական ոգնությունն ավելացնելու նպատակով կառուցել և շահագործման հանձնել նոր ծննդարաններ՝ 32.000 մահճակալով, վորոնցից պետական բյուջեի հաշվին՝ 16

4

Պատկեր 29. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 4

1936 թվ. համար պետական և տեղական բյուջեներով, լրացուցիչ կերպով 692,8 միլիոն ռուբլի, մսուրների, մանկապարտեզների, ծննդականների, մանկավարժական կետերի ծավալման համար:

Այդ փաստը կրկին անգամ ապացուցում է այն, վոր խորհրդային իշխանությունը կոնկրետ օգնություն է ցույց տալիս կնոջը իր յերեխաներին դաստիարակելու և աճեցնելու գործում:

Որենսգիծը մեծ պատասխանատվություն է դնում ամուսնու և հոր վրա: Փոփոխություն է մտցրված ամուսնալուծության օրենսդրության մեջ: Ընտանիքի և ընտանեկան պարտականությունների նկատմամբ թեթևամիտ վերաբերմունք ցուցաբերելու դեմ պայքարելու համար, ամուսնալուծության դեպքում Զագս են հրավիրվում բաժանվող յերկու ամուսիններն էլ: Բարձրացել է ամուսնալուծության գրանցումների վճարը— առաջին ամուսնալուծության դեպքում պետք է վճարել 50 ռուբլի, յերկրորդ դեպքում՝ 150 ռուբլի, յերրորդ և հաջորդ ամուսնալուծությունների դեպքում 300 ռուբլի:

Ուժեղացված է ալիմենտ չվճարելու համար սահմանված քրեական պատիժը:

Ահա այն հիմնական խնդիրները, վորոնք պարունակում է իր մեջ աշխատավորության լայն խավերի մասնակցությամբ մշակված վորոշումը.

# ԻՄ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԵԽԱՆԵՐՍ ԵՆ

Յես միայն 26 տարեկան եմ, բայց պակաս դժբախտություն և զրկանքներ չեմ կրել, վորոնց ծանրության տակ անցել է իմ յերիտասարդությունը:

Մինչև հեղափոխությունը, յերբ յես միայն 8 տարեկան եյի, յես ճաշակեցի դառնության բաժակը: Յես բանվորի աղջիկ եյի, և ինձ դպրոց չեյին ընդունում, այն ինչ մեր տանտիրուհու յերեխաներն ամեն օր դըպրոց եյին գնում, և իմ մեջ ես ցանկություն եյին առաջանում ստանալ նույն դաստիարակությունն, ինչ վոր իմ հասակակիցներն եյին ստանում. Նրանք չարունակ ծաղրում եյին իմ անգրագիտությունը: Հայրս շատ չարչարվեց, մինչև վոր ինձ ուսման տվեց: Բայց դպրոց գնալուս հենց առաջին օրը ինձ պատժեցին. մի բան, վոր յես ծնողներիցս տանը չեյի տեսել:

Ի՞նչ եյին մեզ սովորեցնում: Ամենից առաջ՝ «կրոն», հետո կարդալ-գրել և թվաբանություն: Վեց ամսվա ընթացքում, վոր հեղափոխությունից առաջ յեղել եմ դպրոցում, յես կոնկրետ վոչինչ չեմ ստացել: Ծնողներս իմ ուսման վարձը չեյին կարողանում վճարել, ինքս էլ բնականից չարաճճի եյի, և ահա մի օր ինձ դպրոցից դուրս արին. «Մինչև փողը չբերես, դասարան մտնել չհամարձակվես»,— ասացին:

Վշտից ու ցավից յես չեյի կարողանում հանգստանալ և օրերով կորչում եյի Ժելեզնովոդսկ քաղաքը շրջապատող անտառներում: Բնությունն իր բարերար ազդեցությունն արեց, և յես նրանով տարված ժամանակ առ ժամանակ մոռանում կամ պարզապես չեյի նկատում ընկերուհիներիս ծաղրը:

Անդուստ զբոսանքներից հետ պա-



Յես կմեծացնեմ մեր սքանչելի յերկրի համար առողջ սերունդ.

հելու համար հայրս վորոշեց ինձ մաքուր չի հագնվում, նրան կծաղ-
տալ մանկական հրապարակ, բայց րեն»,—ասել եյին նրան:
այդ էլ չհաջողվեց. «Ձեր աղջիկը Բայց միևնույն յես չեյի այդպես,

9

Պատկեր 30. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 9



քաղաքում ապրող բանվորների և չքավորների յերեխաների մեծ մասը նույն դրության մեջ եյին։ Կային և այնպիսիները, վորոնք գործի գնալիս, իրենց յերեխաներին թողնում եյին անխնամ, փողոցում մինչև յերեկո։ Ինչե՞ր ասես, վոր չեր պատահում նրանց։

Իսկ ի՞նչ ենք տեսնում հիմա այստեղ, ազատության, հավասարության և սիրո յերկրում, վորտեղ ծաղկում է կյանքը և միլիոնավոր սրտերից անհետանում է դառն հիշողությունը, վորտեղ յերիտասարդությունն աճել է Խորհրդային Միության և խորհրդային դաստիարակության գրկում, վորտեղ յերիտասարդությունն ամբողջ ազգաբնակչության 43%-ն է կազմում.

Հիշում եմ, առաջ մայրս շատ էր դանդաղավում, վոր յերեխաներ ունենալը միայն տանջանք է տալիս։ Բայց այժմ յես յերկու փոքրիկների մայր լինելով, ինձ ամենայերջանիկ կինն եմ համարում և բոլորովին էլ չեմ անհանգստանում, թե նրանք ինձ խանգարում են. ընդհակառակը, նրանք իմ ուրախությունն են կազմում։

Խորհրդային իշխանությունն ինձ կրթություն տվեց. ինձ տվեց իրավունք նվաճելու գիտությունը, և յես իմ յերեխաներին դաստիարակում եմ այն վոգով, ինչ վոգով վոր յես եմ դաստիարակվել՝ կոմունիստական վոգով։

Վա՜յ այն կնոջը, վոր յերեխա չունի, վա՜յ այն կնոջը, վոր դեռ ես իր փոքրիկների քաղցրությունը չգիտե և աբորտի է գնում։ Յես կոմյերիտուհի յեմ և միաժամանակ մայր եմ. ո՜, վորքան լավ է հնչում «մայր» բառը։

Յերեխաներն ինձ չեն խանգարում։ Առավոտները յես նրանց տանում եմ մսուր և մանկապարտեզ և ինքս գնում եմ աշխատանքի և բոլորովին չեմ մտածում, թե նրանք վո՛րտեղ են և ի՞նչ են անում։ Յես գիտեմ, վոր նրանց հսկող կա, վոր նրանք կուշտ են, վոր բժիշկը, վարիչն ու ղեկավարները հսկում և խնամում են նրանց։ Իմ յերեխաներին յես վստահում եմ նրանց։

Չնայած վոր յես յերեխաներ ունեմ, յես, վորպես կոմյերիտուհի, ակտիվ մասնակցում եմ հասարակական աշխատանքներին, հաճախում եմ քաղխմբակի պարապմունքներին և առաջավոր սովորողներից հետ չեմ մնում։ Յերազում եմ մանել տասնամյակ, նախավերջին դասարանը, միջնակարգ կրթություն ստանալու և վերադաս մարմինների վորոշումն արդարացնելու համար։

Աբորտն արգելելու վորոշումը յես ընդունեցի ուրախությամբ, վորովհետև դրա շնորհիվ մենք կարող ենք պայքարել յերեխաների սպանության դեմ, վորոնք դեռ սաղմնային վիճակումն են։ Մենք պարտավոր ենք տալ մեր յերկրին առողջ, ուժեղ, ուրախ սերունդ, վորոնք կարողանան պաշտպանել մեր մեծ պրոլետարական հայրենիքը՝ Խորհրդային Միությունը։

Կոմյերիտուհի
ՄԱՐՈՒՍՅԱ ԼԱԼԱՅԱՆ

(Ձեթ-Օճառ կոմբինատ).

## ՎՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Աբորտներն արգելելու, բազմանդամ յերեխաներ ունեցող ընտանիքներին օգնելու, աշխատավոր մայրերին օգնելու համար, մսուրների, ծննդատների ցանցը լայնացնելու համար, այս կարևորագույն վորոշումների հրապարակումը արդյունք է մեր անտեսության հարաճուն վերելքի, արդյունք է նրան, վոր մեզ մոտ մայրը վայելում է հարգանք, սեր, հասարակական հոգատարություն։

Կինը մեզ մոտ լիակատար կերպով օգտվում է հասարակական և քաղաքական իրավունքներից, հավասար ընկեր տղամարդուն, սակայն կինը՝ վոչ միայն աշխատանքի ընկեր է, նա ունի իր պատվավոր պարտականությունը։ Մանուկ սերնդի աճեցման, նրա խնամման ու դաստիարակության առաջին պարտականությունը մորն է պատկանում։ Աբորտները նրանց քայքայում ու ամլացնում են, ահա թե ինչու Ձեթ-Օճառ կոմբինատի բանվորները և առաջին հերթին կանայք վողջունում են իր ժամանակին հրապարակված կառավարության վորոշման նախագիծը։

Կառավարության նախագծի քննության առթիվ Ձեթ-Օճառի բանվորուհիները և բանվորները գտնում են, վոր անհրաժեշտ է վորոշ օգնություն նաև 6—7 յերեխա ունեցող ընտանիքին, օրինակ՝ Գ. Համբարձումյանը 7 յերեխա ունի, ստանում է մոտ 200 ռուբլի, Սարգսյանը 6 յերեխա, Շ. Մաթևոսյանը 5 յերեխա և այլն։ Մեզ մոտ հատկապես կան ընտանիքներ, վորոնք ապրում են փոքր բնակարաններում (8 քառ. մետր). այս պայմաններում մայրեր կան, վորոնք 10 տարի աշխատում են և չունենալով բնակարանային հարմարություն, դիմում են աբորտի և քայքայում իրենց առողջությունը։ Յուրաքանչյուր գործարանի դիրեկցիան պետք է ստեղծի նաև բնակարանային հարմարություններ։

Յենովք Պողոսյանը, վորը վորոշ չափով բավարարված է բնակարանով, կինը վեց յերեխա յե բերել և վոչ մի անգամ աբորտի չի դիմել։

Սա խոսում է այն մասին, վոր յերեխա բերելը լավ է աբորտից։ Սակայն մենք պետք է ստեղծենք համապատասխան բնակարանային հարմարություն, վորպեսզի 8 քառ. մետրի վրա 3-4 հոգուց բաղկացած ընտանիք չբնակեցնենք։

Կան կանայք, վորոնք աշխատում են հիմնարկներում, ուր չկան մսուր մանկապարտեզներ։ Այդպիսի մայրեր իրենց յերեխաներին թողնում են փողոց կամ հարևանի հույսին (օրինակ՝ Ձեթ-Օճառում ապրող Մարգարյան Կ. աշխատում է Հայսննդառի գծով Ջրի կրպակներում)։ Այդպիսիների համար պետք է բաց անել ընդհանուր մսուրներ։

Վ. ՄԱԴՈՅԱՆ

10

Պատկեր 31. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս, էջ 10



# ՄԱՅՐԵՐԻ ՆԱՄԱԿԸ

ԽՍՀՄ-ի ԿԳԿ հրապարակած որոշման նախագիծը լիովին ժամանակին է, վորովհետև մենք արդեն հեռու յենք թողել քայքայման, պակասությունների տարիները, յերբ յուրաքանչյուր ավելորդ բերանը ընտանիքի համար մի բեռ եր: Աբորտներն արգելելու մասին այս նախագիծը վկայում է այն հուզիչ ու սիրառատ հոգատարության մասին դեպի մեր յերկրի կանայք, վորն տածում է եվ ավելի սիրել մեր հայրենիքը և նրա կառավարությունը, վորին ղեկավարում է մեր սիրելի մեծ Ստալինը: Մեզ, կանանցս վրա դժվար խնդիր է դրվում՝ դաստիարակել նոր, ամուր սերունդ, վորպեսզի նրանք շարունակեն իրենց հայրերի սկսած գործը:

ԽՍՀՄ-ի կենտգործկոմի վորոշումը աբորտներ արգելելու և մանկական հիմնարկների ցանցը լայնացնելու մասին, մեծ խանդավառություն առաջացրեց մեր մեջ. մենք մեզ բախտավոր ենք զգում, վոր այդպիսի մեծ պարտականություն է դրվում մեզ վրա: Մեր ամբողջ աշխատանքը պիտի գնա այն ուղղությամբ վորպեսզի մենք ոգնենք մանկական հիմնարկների գործի կազմակերպման:

Յերկրորդ՝ մանկապարտեզները, մսուրները, մանկահրապարակներն այն հաշվով պիտի կազմակերպել, վորպեսզի յեթե վոչ ամեն մի փողոցում, գոնե յուրաքանչյուր յերկու փողոցի համար անպայման ունենալ այդ մանկհիմնարկները, և այն էլ վոչ միայն ցերեկային, այլև յերեկոյան, վորպեսզի յերեխաների մայրը վոչ միայն ամբողջ որը յերեխաների մոտ լինի, այլև կարողանա լինել կինոյում, թատրոնում, ոպերայում, ժողովների, ինչպես և կարողանա աշխատել:

Յերրորդ՝ մեծացնել մանկական խանութների ցանցը, տալ յերեխայի մորը բոլորին, ինչ վոր պահանջվում է յերեխայի համար և վերանայել մանկական խանութներում գոյություն ունեցող գները: Չորրորդը և ամենագլխավորը՝ կազմակերպել կանացի կաթ հավաքելու բազա: Վոչ բոլոր մայրերը բավականաչափ կաթ ունեն իրենց յերեխային կերակրելու համար, և այդ մայրը, բժշկի վկայականով կարող է բազայից իր յերեխայի համար կաթ ստանալ: Այս գործով պետք է զբաղվի Առժողկոմատը:

Հինգերորդ՝ ալիմենտը վճարողների հարցը: Ապահարզանի դեպքում այն կողմը, վոր թողնում է յերեխաներին, վոչ միայն պիտի գրանցվի անցագրում, այլ և աշխատանքային ցուցակում և պարտավորեցվի, վորպեսզի հիմնարկն ինքը հետ պահեր և յերեխաների ապրուստի գումարը ուղարկեր ում հարկն է, առանց դատական մարմինների վորոշմանն սպասելու: Վեցերորդ՝ կատարած աբորտը թաքցնելու համար չբավարարվել տուգանքով, այլ յենթարկել քրեական պատասխանատվության և՛ աբորտ անողին, և՛ նրան, ով ստիպել է աբորտ անել:

Մենք գոհ ենք աբորտի արգելումից, մենք բոլոր ուժերը կներդնենք յերեխաների դաստիարակման և սոցիալիզմի լրիվ կառուցման, ամրակազմ մարտիկներ պատրաստելու համար:

Ռուսթավելի № 66 տան կանանց կողմից՝ ԿՈՒՏԵՊՈՎԱ

Պատկեր 32. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս



# ԱԲՈՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՒՄ Ե ԿՆՈՋ ՈՐԳԱՆԻԶՄԸ

Ես 19 տարեկան հասակում ամուսնացել եմ և իմ կյանքի ընթացքում վոչ մի անգամ աբորտ չեմ արել: Հիմա ունեմ առողջ ու կայտառ վեց յերեխա, վորոնք աչքի յեն ընկնում իրենց ընդունակությամբ: Առողջ եմ նաև յես, վորի շնորհիվ չնայած 45 տարեկան եմ, բայց իմ աշխատունակությունը չեմ կորցրել, դարձել եմ ստախանովական և իմ պլանները միշտ գերակատարում եմ: Հիմա իմ կյանքն ուրախ է դարձել ինձ համար:

Սակայն իմ ընկերուհի Սիրուշ Մինասյանը ինձպես չվարվեց: Նա հաճախ եր աբորտ անում: Իսկ վերջում, յերբ բժիշկն արգելեց նրան աբորտ անել, նա դիմեց հեքիմներին, վիժեցրեց յերեխան, իսկ ինքը մեռավ:

ԱՐՈՒՍՅԱԿ ՋԱՏԻԿՅԱՆ

(Տրիկոտաժ գործարանի ավարտող ցեխի բանվորուհի)

Պատկեր 33. «Հայաստանի աշխատավորուհի», 1936 թվական, հունիս

ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

